ԱԶԳԱՅԻՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԱԳԱՅ

ԼԶ. ՏԱՐԻ ԹԻՒ 1969 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 19 ՅՈՒՆՈՒԱՐ 2015
• VOL. XXXVI, NO 1969 • LUNDI, 19 JANVIER 2015 • MONDAY, JANUARY 19, 2015

1915-2015
ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
100-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՄ

Մենք եւս Շառլի ենք

Յունուար 7, 2015, անցեալ Չորեքշաբթի օր Փարիզի Շառլի Էպտո շաբաթաթերթի անձնակազմին դէմ կատարուած ահաբեկչական վայրագ յարձակումը, եւ անոր հետեւող համաշխարհային դատապարտութեան աննախընթաց ժողովրդային արտայայտութիւնները ցնցեցին քաղաքակիրթ ամբողջ աշխարհը:

Հայ ժողովուրդը ամբողջ եւ բնականաբար Գանատահայութիւնը, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը եւ «Ազագայ» շաբաթաթերթը իրենց ամբողջական զօրակցութիւնը կը յայտնեն Խօսքի եւ խիղճի ազատութեան ի նպաստ, այս օրերուն կատարուող բոլոր տեսակի արտայայտութեանց:

Բոլորին հետ միասին մենք եւս մեր խոր ցաւումը կը յայտնենք կատարուած ահաւոր ոճրային արարքին համար եւ մեր խորագոյն ցաւակցութիւնները կը յայտնենք բոլոր զոհերու ընտանիքներուն եւ Ֆրանսայի ազատատենչ ժողովուրդին եւ պետութեան:

Զուգադիպութիւնը այնպէս է թէ գրեթէ ճիշդ ութը տարիներ առաջ, նոյն տեսակի ծայրայեղութեան զոհ դարձաւ մեր ժողովուրդի աննման վաւակ, լրագրող Հրանդ Տինքը, 19 Յունուար 2007-ին:

Անհրաժեշտ է, որ համաշխարհային դատապարտութեան հսկայական ալիքը որ ծայր տուաւ 2015 տարուայ սկզբնաւորութեան, շարունակէ զգացութեան մէջ պահել միջազգային պետութեանց խիղճերը որպէսզի իրենց զօրակցութիւնը անկաշկանդ կերպով արտայայտեն նաեւ Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեայ տարեդարձին, 24 Ապրիլ 2015-ին, ուր հայ ժողովուրդը պիտի ոգեկոչէ խիղճի եւ խօսքի ազատութեան ի խնդիր, իր տուած մէկուկէս միլիոն նահատակներու յիշատակը:

ԱՀԱՒՈՐ ՀԱՒԱՔԱԿԱՆ ՈՃԻՐ ՄԸ ՑՆՑԵՑ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԸ ԽՕՍՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՎԱՅՐԱԳ ՀԱՐՈՒԱԾ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

12 մեռեալ, նոյնքան վիրաւոր

Մաքէօ Մատենեան

Փարիզի աշխարհածանօթ երգիծական շաբաթաթերթ «Շառլի Հէպտո»ի խմբագրութեան կազմի Չորեքշաբթի 7 Յունվարի ժողովը կոպտօրէն ընդհատուեցաւ երբ երկու ոճրագործներ արագահարուած զէնքերով խուժեցին ժողովասրահը ու «Ալլահ Աքպար», «Ալ Քաէտայի վրէժը» բացագանչութիւններով անխնայ կրակեցին ներկաներուն վրայ, սպանելով 12 հոգի եւ վիրաւորելով 11 ուրիշներ, ներառեալ երկու պահակ ոստիկաններ:

Երգիծաթերթը անցեալին բազմաթիւ խիստ սպառնալիքներ ստացած էր. ան նոյնիսկ անյաջող խափանարարական փորձի մը ենթարկուած էր 2006-ին առ ի բողոք թերթին մէջ յաճախակի կերպով Մուհամէտ Մարգարէն եւ իսլամական հաւատքը երգիծանկարներով քննադատած ըլլալու համար:

Ոճրագործները Սահիտ եւ Ռէշիտ Քուաշի եղբայրներն են, Մաղրէպցի, Ֆրանսական քաղաքացիութեամբ: Անոնք պատանդներ վերցնելով փախուստ տուած են, սակայն հետապնդուած են հիւսիսային շրջանի անտառային տարածքներ, ուր անոնք պաշարուած են ապահովութեան ուժերու

Շար. էջ 14

Հրթիռակոծուեցաւ Հալէպի Հայ Կաթողիկէ Համայնքի Ս.Ռիթա Եկեղեցին

Հալէպի Գանձասար շաբաթաթերթէն կ'իմանանք, որ Ուրբաթ՝ 9 Յունուար 2015-ի յետմիջօրէի ժամը 3:30-ին զինեալ ահաբեկչական խմբաւորումներ հրթիռակոծեցին Հալէպի հայ կաթողիկէ համայնքի առաջնորդարանին կից գտնուող Սրբուհի Ռիթա եկեղեցին, որուն իբրեւ հետեւանք եկեղեցւոյ կառոյցը մասամբ քանդուեցաւ:

Տնօրինէք Հայաստանի դեսպանատան մէջ

Յունուար 7-ին Գանատահայոց Առաջնորդ Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեան, գեղեցիկ նոր սովորութիւն մը ստեղծելով Տնօրինէքի կարգ կատարեց, Օթթաուա-ի Հայաստանի դեսպանատան մէջ, հրաւէրով Հայաստանի արտակարգ լիազօր դեսպան Պրն. Արմէն Եկանեանի, իր կողքին ունենալով, Լաւալի Սուրբ Խաչ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Տէր Կոմիտաս քհնյ. Միրզախանեան:

Սրբազան Հայրը օրհնեց հաց, աղ եւ ջուրը եւ իր օրհնաբեր Սուրբ Ծննդեան խօսքը ուղղեց Հայաստանի դեսպանին, անոր ընտանիքին եւ դեսպանատան ամբողջ ընտրակազմին.

Տնօրինէքին ներկայ էին Օթթաուա-ի հայ համայնքի անդամներ եւ կազմակերպութեանց ներկայացուցիչները Մոնթրէալէն եւ Թորոնթոյէն:

Տնօրինէքէն ետք Պրն. Դեսպանը ինք եւս կատարեց իր սրտի խօսքը եւ հրաւիրեց ներկաները ջերմ մթնոլորտի մը մէջ պատշաճ հիւրասիրութեամբ մը:

ՏԱՐԲԵՐ ԱԼԻՔՆԵՐԸ ՀԱՄԱԴՐԵԼՈՒ ՓՈՐՁ

ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ

Անմիջականօրէն հետեւելով Համաշխարհային Հայկական Գոնկրէսի հրաւէրով Երեւան ժամանած հրէական եւրոպական սփիւռքի ներկայացուցիչներու հետ կայացած խորհրդարանական ելոյթներու ու անոնց հետեւած խորհրդաժողովի աշխատանքներուն, որոնք ընթացան պատշաճ մակարդակով եւ հայկական հիւրընկալութեան վայել մթնոլորտի մը մէջ, կ՚ուզէի ներկայացնել իմ մի քանի նկատումներս, հիմնուած զուտ անձնական տպաւորութիւններու վրայ:

Թէ՛ խորհրդարանական ելոյթներու, թէ՛ խորհրդաժողովի նիւթերը՝ «Աշխարհն առանց ցեղասպանութիւններու» եւ «Երկու սփիւռքեան կազմակերպութիւններու համագործակցութեան հե-ռանկարները» խորագրերու ներքոյ, արդէն կը գծէին արծարծուող հարցերու շրջանակը, Մեծ Եղեռնի 100-րդ եւ Շոայի (Հոլոքոսթ) 70-րդ տարելիցներու մօտիկութեամբ ալ պայմանաւորուած:

Ժխտողականութեան, մարդատեացութեան, ցեղապաշտութեան, կրօնական մոլեռանդութեան դէմ պայքար: Ասոնք էին այն հարցերը, որոնք կը հետաքրքրէին հրէական կողմին: Մինչդեռ հայկական կողմը սեւեռուած էր գլխաւորաբար Ցեղասպանութեան ճանաչման հարցի վրայ, մանաւանդ որ ելոյթներու ընդամենը երկու օր առաջ Իսրայէլի նախագահ Ռեուվէն Ռիվլին, որ նախապէս մեզի յայտնի էր Քնեսէթի մէջ որպէս Հայոց Ցեղասպանութեան ճանաչման ջատագով, մերժած էր քննարկման համար վաւերացնել հերթական բանաձեւը նոյն Քնեսէթին մէջ:

Սակայն զարմանալիօրէն այդ պարագան, ինչպէս որ հարկն է, չարծարծուեցաւ հայկական կողմէն: Մեր հռետորները հիմնականին մէջ կը բաւականանային հայ եւ հրեայ բարեկամութեան ոգեկոչումներով: Նոյնիսկ մեր արուեստագէտներէն մէկը չզլացաւ յիշել, որ ինքը պատիւ ունեցած է գիշերելու Իսրայէլի նախկին վարչապետ եւ նախագահ Շիմոն Բերէզի տանը, չմոռնալով անոր որակել՝ «հանճարեղ»:

Ընդհանուր առմամբ, զանց առնելով բացառութիւնները, նման քաղաքական ֆորումներու մէջ մեր ազգակիցներու ոչ քաղաքական, ես պիտի ըսէի՝ հայավարի ելոյթները, զգացմունքայնութեան դրսեւորումները կը մատնէին օտարազգիներուն դիւր գալու միամիտ միտում, որ կը թողու, ընդհակառակը, աննպաստ տպաւորութիւն: Պետք է միշտ յիշել նոյն՝ հրեայ առաջնորդներէն մեկուն՝ Իսրայէլի առաջին վարչապետ Կոլտա Մէյըրի յորդորը իր ժողովուրդին՝ «Մեզի պէտք չէ ուրիշ ազգերու սէրը մեր նկատմամբ. աւելի լաւ է այսուհետեւ անոնք վախնան մեզմէ ու յարգեն մեզի, քան թէ սիրեն»...:

Ինչ կը վերաբերի հրեայ գործիչներու, անոնք անհամեմատ գործնական ու գործնապաշտ էին.

«կուտաս՝ կուտամ» բանաձեւն էր տիրապետողը անոնց մօտ: Ու թէեւ անոնց կողմէ եղան որոշ երկիրներու մէջ հայութեան հետ աշխատելու խօստումներ, մասնաւորապէս Ցեղասպանութեան դէմ կրթական ու հասարակական ոլորտներու մէջ պայքարելու առաջարկներ ներկայացուեցան, սակայն անոնց մօտ ես չնկատեցի որեւէ շահագրգռուածութիւն Հայոց Ցեղասպանութեան ճանաչման խնդրին աջակցելու, առաւել եւս՝ անոնց հետեւանքներու վերացմանը նպաստելու ուղղութեամբ: Անոնց կը մտահոգէին, օրինակ, Իրանի հետ մեր բարիդրացիական յարաբերութիւնները, փոխադարձաբար առաջ քաշելով Թուրքիայի հետ Իսրայէլի ներկայիս «փափուկ» յարաբերությունները առաւել չբարդացնելու իրենց մտահոգությունը: Փոխարէնը կ՚ընդգծէին միացեալ ուժերով հակասեմականութեան եւ իսլամական արմատականութեան դէմ պայքարելու անհրաժեշտութիւնը:

Բոլոր պարագաներու տակ համոզուած կարելի է ըսել, որ այս նախաձեռնութիւնը որպէս սկիզբ խիստ կարեւոր էր եւ կարող է տարբեր ալիքներու վրայ գտնուող մեր եւ իրենց դիրքերը մօտեցնել իրար: Մանաւանդ որ կողմերու միջեւ պայմանաւորուածութիւն ձեռք բերուեցաւ շարունակելու փոխադարձ հանդիպումներն ու շփումները, խորացնելու կապերն ու խորհրդատուութիւնները:

Եւ դա, յամենայնդէպս, կարեւոր սկիզբ է 100-ամյա տարելիցի սեմին:

«ԱԶԳ»

Յարութիւնեան կը վստահեցնէ, որ իրավիճակը աւելի հանգիստ է, սակայն կը թելադրէ զգօն ըլլալ

Արցախի վարչապետ Արայիկ Յարութիւնեան առաջնագծին տիրող լարուած իրավիճակը անհանգստացնող կը համարէ, սակայն միաժամանակ կը նշէ, որ շատ մտահոգուիլ պէտք չէ. վիճակը վերահսկելի է: Այս մասին կը յայտնէ ԼՂՀ պաշտպանութեան նախարարութիւնը:

«Համարժէք եւ մի քիչ աւելի քիչ համարժէքութեամբ, պատասխաններ միշտ էլ լինում են»,- ըսած է վարչապետը աւելցընելով, որ անձամբ այցելած է առաջնագիծ, ծանօթացած իրավիճակին:

Արայիկ Յարութիւնեանի կարծիքով հայկական երկու հանրապետութիւններու պաշտպանական գերատեսչութիւնները պէտք է զգօնութիւն ցուցաբերեն, քանի որ ունինք անկանխատեսելի հակառակորդ:

Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Հիմնարկի ցուցանմոյշները պիտի ներկայացուին տարբեր մայրաքաղաքներու մէջ

Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին ընդառաջ Թանգարան-Հիմնարկի տնօրէն Հայկ Դեմոյեանի համաձայն, նախապատրաստական աշխատանքս կարելի է աւարտած նկատել: Երեք տարուան շինարարական աշխատանքը աւարտած է, ու Ապրիլին թանգարանը պիտի ներկայանայ նոր տեսքով եւ նախագիծով: Դեմոյեան կը տեղեկացնէ, «Յուշահամալիրի տարածքում ամբողջութեամբ նորոգուել է յուշասիւնը. նոր թանգարանի շէնքը 2,5 անգամ ընդարձակուել է: Թանգարանն ունի նոր յարմարութիւններ, ստեղծուել է բացառիկ պայման ֆոնդերի պահպանութեան համար, վերազինուել են կահոյքը, տեխնիկական միջոցները: Թանգարանի փոքրիկ սրահին մէջ կայ մնայուն ցուցադրութիւն, որ այս տարի տասնըհինգ հազար այցելու ունեցած է: Չենք սահմանափակուի միայն Ծիծեռնակաբերդում ցուցադրութեամբ: Մեր զինանոցի պաշարի մի մասը կը ցուցադրուի աշխարհի բազմաթիւ քաղաքներում: Նախատեսւում է ունիւերսալ ցուցադրութիւն՝ չորս լեզուներով, որը ներկայացնելու ենք Սփիւռքի բազմաթիւ համայնքներում:

Իւրաքանչիւր տարածաշրջանի համար նախատեսւում է առանձին ցուցադրութիւն եւ ժամանակաւոր ցուցադրութիւններին կ՚ուղեկցեն բազմալեզու կատալոգները: Այս պահի դրութեամբ բոլոր աշխարհամասերում աւելի քան յիսուն ցուցադրութեան անցկացում է նախատեսւում», յայտնած է Դեմոյեան:

Վերջերս թանգարանը կարեւոր եւ մեծ ցուցահանդէսներու կայացման գծով համաձայնութիւններ գոյացուցած է աշխարհի բազմաթիւ քաղաքներու ղեկավարներուն հետ: Ապրիլին Փարիզի քաղաքապետարանը պիտի հիւրընկալէ Հայոց Ցեղասպանութեան թանգարանի ցուցադրութիւնը: Քաղաքապետարանին՝ Լուվրի կից գործող երկու մեծ ցուցասրահներուն մէջ պիտի ներկայացուին թանգարանի ցուցանմոյշները: Լոս Անճելըսի մշակութային կեդրոնին մէջ երեք օր շարունակ պիտի գործէ «Հայոց Ցեղասպանութեան լուսաբանումը համաշխարհային մամուլի էջերում» խորագիրով ցուցադրութիւնը, որ պիտի ներկայացուի նաեւ եւրոպական շարք մը մայրաքաղաքներու մէջ:

Մեծագոյն ծրագիրներէն է նաեւ Երեւանի մէջ կայանալիք ցեղասպանագէտներու համաժողովը: Յուլիս 8էն 12 Երեւանի մէջ տեղի պիտի ունենայ մեծ գիտաժողով, որուն պիտի մասնակցին աւելի քան 300 ցեղասպանագէտներ:

«Ոսկէ Ծիրան» շարժապատկերի փառատօնի ծիրին մէջ պիտի ցուցադրուի Արշալոյս (Օրօրա) Մարտիկանեանի պատմութեան նուիրուած

եւ Ցեղասպանութեան մասին պատմող շարժապատկերը՝ «Բռնաբարուած Հայաստան» խորագիրով, իսկ համահայկական խաղերուն ընթացքին պիտի ցուցադրուի մինչեւ 1915 թուական Օսմանեան կայսրութեան մէջ հայկական մարմնակրթութեան մասին հաւաքուած հսկայական արխիւը: Աշնան կը նախատեսուի կայացնել մեծ գիտաժողով «Ցեղասպանութեան երեխայ զոհեր» խորագիրով:

ԱԲԱԳԵՅ
Շաբաթաթերթ
ABAKA
Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251
Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manoogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5
Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca
Պատասխանատու խմբագիր՝
ԱՒԵՏԻՍ ՊԱԳԳԱԼԵԱՆ
Ծանուցումներու, նուիրատուութիւններու եւ գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԲԻ ՄԱՐԿՈՍԵԱՆ
Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՏԱԹ Բ. ՄԱՄՈՒՐԵԱՆ
Canada
2nd Class $80 (QC & ON)
1ère classe/first class $90
U.S.A. 1st class (US)$90
Autres pays/Other countries:
1st class (US)$120
Per issue $1.75
Dépôt légal: Bibliothèque du Québec
PM40015549R10945
TPS/GST – R119209294 • TVQ/PST #1006268699

"We acknowledge the financial support of the Government of Canada through the Canada Periodical Fund (CPF) for our publishing activities."
Canada

Անմոռանալի փառահեղ կաղանդ մը. Թէքէեան Մշակութային Միութեան Կեդրոնէն ներս

Թեւակոխեցինք Նոր տարի մը եւս: Թող գալուստը ըլլայ բարի. համայն աշխարհի, մեր հայրենիքին եւ մեր ապրելու արժանի ժողովուրդին համար: Կաղանդի գիշեր է ամէն կողմ, ընտանիքներ իրենց տուներուն մէջ, կամ միութենական սրահներու մէջ համախմբուած՝ խնդութեան մէջ են: Օդը նպաստաւոր է ձիւն չկայ: Կը մտնենք Թէքէեան Մշակութային Միութեան Կեդրոնէն ներս, լուսազարդ ծառեր, սպիտակ գեղեցկութիւն մը կը տիրեն:

Կարելի չէ զսպել հիացիկ բացագանչութիւնները հետզհետէ ժամանող հիւրերուն, ի տես ամբողջութեամբ շղարշապատ պատերուն, փալփլացող ջահերուն, անճանաչելի գեղեցկութեան, որ կը տիրէր «Տքթ. Յարութիւն եւ Սիմա Արզումանեան սրահէն ներս: Ճաշակով յարդարուած սեղաններու շուրջ բոլորը նստած ընտանիքներ, խինդ ու ծիծաղով սկսան երեկոն:

Կերուխումի հետ թափ առաւ Արթիւր Աբգարեանի նուագախումբը: Արթիւրը իր երգերով, բազմազան նուագարաններու հնչիւն ձայներով, պարեղանակներով պարահարթակը լեցուն պահեցին երեկոյի ամբողջ տեւողութեան:

Մեծ հաճոյքով ընկալուեցաւ, Վիվիկի համեղ ճաշերու սպասարկութիւնը, առանց յապաղումի: Երիտասարդներու հոծ թիւը, ընտրանի ժողովուրդը, նուագախումբը, կազմակերպչական անթերի բնոյթը, երեկոյեան տուին բացառիկ ընթացք մը: Իսկական կաղանդ առանց ընդմիջումի:

Նոր տարին դիմաւորելու նախընթաց ժամերուն, պէտք է օրհնուէին սեղանները: Ահա այդ գեղեցիկ առիթը ընծայեց, Գանատահայոց կորովի առաջնորդը՝ Գերշ. Տէր Աբգար եպիսկոպոս Յովակիմեան: Սրբազան հայրը իր հոգեշունչ եւ տպաւորիչ խօսքերով, ներկաները յուսադրեց լաւատեսութեամբ դիմաւորելու գալիք օրհնաբեր տարին, մաղթելով որ յաւերժ ժպտուն մնան մեր մանուկներու դէմքերը:

Մեծ ու պզտիկ քովէ քով, քոթիյսներու սուլոցներ, Արթիւրին խանդավառ նուագախումբով եւ երգերով, պարերով, անբացատրելի մթնոլորտ մը, իր զուարթ գագաթնակէտին հասաւ:

Հայկական աւանդութեան համաձայն իւրաքանչիւր սեղանի վրայ դրուեցաւ հայկական հացը «Չէօրէկ» որուն վրայ գծագրուած էր 2015 տարեթիւը: Ապա ժողովուրդը հրաւիրուեցաւ ճաշակելու մուտքի սեղաններու վրայ զետեղուած բազմազան անուշեղէնները «Sweet Table» ուր տեղ գրաւած էր նաեւ անուշապուրը: Անակնկալօրէն Էմիլ Պազիլեան եւ իր երկու ընկերները վրացական հաճելի պարերով հանդէս եկան:

Թէքէեան Մշակութային Միութեան նուիրեալ ատենապետը պրն. Արթօ Մանուկեան իր շնորհաւորութիւններն ու շնորհակալութիւնները յայտնեց ներկայ ժողովուրդին եւ բարձրօրէն գնահատեց այս գեղեցիկ տօնակատարութեան կազմակերպութիւնը յանձն առնող զոյգին՝ Արա եւ Ֆլորիտա Պալեաններուն, որոնք աննախընթաց յաջողութեան հասցուցին երեկոյթը:

Վիճակահանութեան արժէքաւոր նուէրներով բախտաւորուեցան բազմաթիւ անձեր:

Թէքէեան Մշակութային Միութիւնը իր գոյութեան նպատակը արժեւորող մշակութային, թատերական, ընկերային յարատեւ, օգտաշատ ձեռնարկներով 2014 տարին եզրափակեց, ներկաներուն մատուցանելով անմոռանալի կաղանդ մը, որուն խրախճանքը յամեցաւ մինչեւ առաւօտեան ուշ ժամերը:

Թող 2015 տարին խաղաղութեան Աղաւնին թեւածէ համայն աշխարհի վրայ եւ բերէ մեր ժողովուրդի արդար պահանջներուն իրականացում:

Ներկայ մը

ԼՂՀ ՊՆ՝ մէկ օրուան ընթացքին Ատրպէյճանը հրադադարը խախտած է շուրջ 400 անգամ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Պաշտպանութեան Բանակի տուեալներուն համաձայն՝ Յունուար 7-ի գիշերը եւ 8-ի առաւօտեան, ղարաբաղա-ատրպէյճանական հակամարտ զօրքերու սահմանագծին, հակառակորդին կողմէ հրադադարը խախտուած է շուրջ 400 անգամ, որուն ընթացքին, տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներէ, ինչպէս նաեւ 60մմ ականանետէ (7 արկ) եւ ՌՊԳ-7 (5 արկ) ու ԳՊ-25 (2 արկ) տիպի նռնականետերէ հայ դիրքապահներու ուղղութեամբ արձակուած է աւելի քան 5500 կրակոց:

ԼՂՀ ՊՆ մամուլի ծառայութեան տեղեկութիւններով՝ ՊԲ յառաջապահ զօրամասերը սահմանագծի ողջ երկայնքով վստահօրէն կ'իրականացնեն մարտական հերթապահութիւն եւ անհրաժեշտութեան պարագային կը դիմեն համապատասխան գործողութիւններու:

«Իսկ ինչ վերաբերում է ղարաբաղեան ուժերի կողմից ատրպէյճանական խաղաղ բնակավայրերի գնդակոծումների մասին վերջին շրջանում համացանցում յայտնուած տեղեկութիւններին, ապա դրանք ոչ այլ ինչ են, քան հերթական ապատեղեկատուութիւն: Արցախի զինուած ուժերը խիստ անհրաժեշտութեան դէպքում միայն ու միայն թիրախային հարուածներ են հասցնում հակառակորդի առաջնագծի դիրքերին՝ նպատակ ունենալով ճնշել վերջինիս նախայարձակ ու սանձարձակ գործողութիւնները:

Խաղաղ բնակավայրերը պաշտպանութեան բանակի համար երբեւէ չեն եղել հարուածի թիրախ: Յիշեցնենք, որ տուեալ վարքագիծը եղել ու մնում է ատրպէյճանական զինուժի «մենաշնորհը», ինչի ապացոյցն են հայ-ատրպէյճանական սահմանահատուածին գտնուող հայկական բնակավայրերի վրայ հակառակորդի կողմից պարբերաբար իրականացուած եւ իրականացուող գնդակոծութիւններն ու արկակոծութիւնները»,– նշուած է ԼՂՀ ՊՆ տարածած մամուլի հաղորդագրութեան մէջ:

Հայը եւ թուրքը կոչ կ'ընեն ճանչնալու Հայոց Ցեղասպանութիւնը

Այս լուսանկարը նկարուած է 2014 թուականի Նոյեմբեր ամսուն՝ Գերմանիոյ մէջ: Լուսանկարի մէջ Ֆրանսա ապրող մեր հայրենակից, հանրածանօթ օփերային երգիչ Ադամ Բարրոն է (Մուրատ Ամիր-խանեան) եւ թուրք յայտնի ռեժիսոր Ֆաթիհ Աքընը, մեծ աղմուկ հանած «Վերքը» (The Cut) ֆիլմի ռեժիսորը:

Հայ եւ թուրք, Հայոց Ցեղասպանութենէն հարիւր տարի անց միասին կ'ըսեն՝ Ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը: Այս քայլով միանալով համացանցի մէջ մեծ տարածում գտած շարժման:

Ճանչնալ... Կը նշանակէ ընդունիլ սեփական պատմութիւնը, որմէ այդքան կը խուսափին թուրքերը: Թէեւ անոնց մէջ կը գտնուին մարդիկ, որոնք կրնան անցեալին նայիլ բաց աչքերով, ինչպէս գերմանաբնակ ռեժիսոր Ֆաթիհ Աքընը, որ իր «անցեալը» ճանչցած է 18-20 տարեկանին. «Երբ իմացայ, որ նման բան եղած է, սկսայ ուսումնասիրել: Կը կարդայի ձեռքս ինկած ամէն բան, ինչ կը վերաբերէր այդ թեմային, ըլլար՝ գիրք, փաստաթուղթ կամ պատմութիւն: Ի դէպ, բաւական շատ չհրապարակուած պատմութիւններ կան, կարեւոր պատմութիւններ: Պէտք է բոլորը իմանան անոնց մասին»:

Տարիներ անց ան կը նկարահանէ իր «Վերքը» ֆիլմը, որ ունի նոյն ուղերձը՝ Ճանչնալ... Ֆիլմ, որ ռեժիսորի խօսքերով, նախ եւ առաջ նկարահանուած է թուրքերու համար, որպէսզի. «Դիտենք, ուսումնասիրենք, ճանչնանք մեր անցեալը: Պէտք է մեր «երէկը» իմանանք, որ այսօր կարենանք առջեւ քալել: Թէեւ շատ մարդիկ չեն ցանկար տեղեկանալ իրենց անցեալի մասին»:

Այդ պատճառով այդ «երէկը» կը շարունակէ ոչ միայն անցեալ ըլլալ, այլեւ ներկայ ու ապագայ այնքան ժամանակ, քանի դեռ աշխարհի որեւէ անկիւնի մէջ կը գտնուին մարդիկ, անկախ ազգութենէն, որ կ'ըսեն՝ Ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը...

ՀՀ Սփիւռքի Նախարար Հրանոյշ Յակոբեանի տարեկան հաշուետու մամուլի ասուլիսը

Դեկտեմբերի 25-ին տեղի ունեցաւ ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանի տարեկան ամփոփիչ մամուլի ասուլիսը:

Նախարարը տեսաշարով ներկայացրեց նախարարութեան կողմից իրականացրած ծրագրերը: Նա նշեց, որ նախարարութեան նախաձեռնած ծրագրերը բոլորն էլ կատարուել են, իսկ առանձին դէպքերում գերազանցուել են նախանշուած ցուցանիշները: Նա ընդգծեց, որ նախարարութիւնը գործակցում է 21 համահայկական կազմակերպութիւնների եւ կառոյցների հետ եւ այս տարի Սեպտեմբերի 19-21-ն անցկացուած Հայրենիք-Սփիւռք V-րդ համաժողովը համախմբեց ու աշխարհի 62 երկրից Հայրենիք բերեց հայկական կազմակերպութիւնների ու կառոյցների 1100 ղեկավարների եւ ներկայացուցիչների:

Նախարարն ասաց, որ ՀՀ սփիւռքի նախարարութիւնը իրականացրել է 2014թ. Երեք գերակայ խնդիրներից բխող միջոցառումներն ու ծրագրերը:

Նախարար Հրանոյշ Յակոբեանը կարեւորեց 2014թ. Յուլիսի 7-ից Օգոստոսի 2-ը Երեւանում կայացած, Սփիւռքի ամառային դպրոց

Շար. էջ 14

Չաւուշօղլու. «Հայոց Ցեղասպանութեան մասին պնդումներ երրորդ երկիրներուն մէջ կ'աւելնան»

Վերջերս թուրք դեսպաններու հաւաքի մը ընթացքին անոնց հետ հանդիպած են Թուրքիոյ խորհրդարանի ղեկավար Ճեմիլ Չիչէքը եւ արտաքին գործոց նախարար Մեւլութ Չաւուշօղլուն: Հանդիպման ընթացքին Ճեմիլ Չիչէք նշած է, որ պետութեան արտաքին քաղաքականութիւնը պէտք է միասնական ըլլայ: «Ամէն կառոյց չի կրնար լարի մը վրայ նուագել: Նոյնիսկ եթէ այդպէս ըլլայ, ատիկա պէտք է մտածելով ու որոշելով ըլլայ: 2015-ը Թուրքիոյ համար դժուար տարի պիտի ըլլայ:

Հայկական պնդումներուն մասին որոշումներու կայացման արշաւներուն ի պատասխան՝ լուրջ ջանքեր պէտք է թափենք»,- ըսած է ան:

Արտաքին գործոց նախարար Չաւուշօղլուն, իր հերթին ընդգծած է, որ իրենք արդէն կը տեսնեն, որ հայկական պնդումները կ'աւելնան երրորդ երկիրներու մէջ:

«Երրորդ երկիրներու աչքին Հայոց Ցեղասպանութեան մասին պնդումները կ'աճին: Ատոր ի պատասխան մենք ալ քաղաքական գործիչներու շրջանակէն ներս ջանքեր պէտք է ներդնենք",- ըսած է ան:

Չիչէք նշած է, որ Թուրքիոյ արձանագրած յաջողութիւններուն մէջ մեծ է երկրի արտաքին գործոց նախարարութեան ներդրումը:

Խորհրդարանի ղեկավարը նշած է, որ իր պաշտօնավարման տարիներուն՝ 2011-էն առ այսօր, իրենք ընդունած են 48 խորհրդարանի նախագահ, 38 նախագահ, 19 վարչապետ, 20 նախարար եւ 96 օտարերկրեայ պատուիրակութիւն:

Թուրքիոյ ԱԳ նախարարը, իր հերթին, առանձնացուցած է խորհրդարանի ունեցած դերակատարութիւնը Հայոց Ցեղասպանութեան պնդումներուն դէմ պայքարի հարցով եւ շնորհակալութիւն յայտնած խորհրդարանի ղեկավարին ու պատգամաւորներուն:

Մոնթրէալի մէջ գտնուող Գանատահայոց Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարը, 2014թ. Դեկտ. 14-ին նշեց 1970թ. Յունիս 22-ին Հայ ժողովուրդի սեփականութիւնը դարձած յիշեալ եկեղեցւոյ 44-րդ տարեդարձը

Նշուած այս գեղեցիկ առիթին իրենց մասնակցութիւնը բերին հոգեւորական երեք Հայրեր՝ յանձինս Գանատահայոց Առաջնորդ Գերշ. Տ. Աբգար եպս. Յովակիմեանի, Գանատայի Հայոց Առաջնորդական փոխանորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի, եւ Եգիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Աշոտ եպս. Մնացականեանի:

Տարեդարձի այդ յիշեալ օրը,

Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան

առաւօտեան, երբ մուտք գործեցի Եկեղեցի, տեսայ միայն քանի մը հոգի որոնք կը կատարէին առաւօտեան ժամերգութիւնը, ընդ որում հաղորդելով խորապէս զգացական ու հաճելի տպաւորութիւն: Կարճ ժամանակ անց, հասաւ ժամը սուրբ պատարագի, երբ գործի լծուեցան Կոմիտաս Դպրաց դասն ու Սուրբ Խորանին սպասարկող սարկաւագները եւ, աստիճանաբար, հաւատացեալ ներկաներով սկսաւ լեցուիլ Եկեղեցին: Անդրադառնալով Դպրաց դասին, անշուշտ, անտեղի կը նկատենք առանձնակի գնահատանքի արժանացնելու այդ խումբը, որն ունենալով գործունէութեան երկար տարիներու փորձառութիւն եւ հմտութիւն, իր դերը կը կատարէ պահանջուող լաւագոյն մակարդակով:

Գերշ. Տ. Աբգար եպս. Յովակիմեան

Գերշ. Տ. Աշոտ եպս. Մնացականեան

Սրբազան Պատարագի աւարտին, երբ ամբողջացած էին եկեղեցական անհրաժեշտ բոլոր արարողութիւնները, ներկայ հասարակութիւնը առաջնորդուեցաւ դէպի «Մարի Մանուկեան» սրահը, ուր պիտի տեղի ունենար ճաշկերոյթը, նաեւ գեղարուեստական յայտագրի գործադրութիւնը: Ճաշկերոյթին

զուգահեռ, գրեթէ անընդմէջ, տեղի կ'ունենային զեկոյցներ, որոնք կ'ընդգրկէին բանաստեղծութիւններու արտասանութիւն, ազգային երգերու կատարում, նաեւ ելոյթներ՝ խորապէս բովանդակալից ու հաճելի:

Կային նաեւ ելոյթներ՝ ընդգրկող բացատրական բաւական ծաւալուն տուեալներ՝ որոնք կրնային հանդէս գալ որպէս անտեղի կրկնութիւններ ու բացատրութիւններ. այս նկատառումով, կ'ուզենք ուշադրութիւն հրաւիրել յատկապէս հոգեւորական մեր Հայրերու ելոյթներուն, որոնք կը ներկայացուէին պատշաճ, չափաւոր եւ ճշգրտուած ու մտածուած, նաեւ խորապէս ըմբռնելի մօտեցումով:

Նման մօտեցումը, բնականաբար, կ'ունենայ իր դրական եւ օգտակար արդիւնքը, որով կ'ուզենք աւարտական մեր խօսքն ամփոփել ելոյթներու նախապատուութիւնը տալով հոգեւորական մեր Հայրերուն:

ԱՐՄԻՆԷ ՔԷՕՇԿԷՐԵԱՆ

ԼՈՒՐԵՐ ՆԻՒ ԵՈՐՔԷՆ

«ԶՈՒԼԱԼ»Ի ՀԱՄՈՅԹԸ

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ

Տօնական օրերուն հետ, նիւ եորքահայութեան հրամցուած հայկական ժողովրդական երգերով «Զուլալ» համոյթը ոգեւորեց ներկաները, հաստատելով որ մեր այլապէս հարուստ երգարուեստը տակաւին երկար տարիներ պիտի կարենայ գոյատեւել այս ափերուն վրայ: Երիտասարդ տաղանդաւոր այս ա գափփելլա թրիօի աղջիկները ամենայն բծախնդրութեամբ պատրաստած էին իրենց յայտագիրը: Գերազանցապէս հայկական ջինջ երաժշտութիւն մը վայելելու հաճոյքը շնորհուեցաւ Ատլանտեանի այս ափին. ու այս արդէն բախտաւորութիւն մը պէտք ենք նկատել ինքնին, երբ դժբախտաբար, խաղաղականի ափը տակաւ կը լեցուի հայկականութենէ որքա՜ն հեռացած օտարամուտ երաժշտութիւն մը, այն ալ Հայաստանէն արտագաղթած հայերու կողմէ ...:

Այս երեք շնորհալի երիտասարդ արուեստագիտուհիները՝ Թենի Աբելեան, Երազ Մարգարեան եւ Անայիս Թեքերեան 2002 թուականէն սկսեալ կ'երգեն միասին: Այս խումբը բարձրացած է Ամերիկայի զանազան յայտնի բեմահարթակներու վրայ, ինչպէս՝ «Կեթթի» թանգարանը, «Պըրքլի» երաժշտական դպրոցը, Գարնըկի Հօլի «Ուէյլ» համերգասրահը, «Քենետի» Կեդրոն, Նիւ Եորքի «Սիմֆընի Սփէյս»,

«Սիրք տը Սոլէյ»ի «մետաքսեայ ճամբու» յայտագրին:

Վերջապէս այս Նիւ Եորք կոչուած անտառին մէջ զուլալ հայկական երաժշտութիւն մը ունկընդրելու պարգեւն է որ կու տան այս տաղանդաւոր մեր աղջիկները:

Դեկտեմբեր 14, 2014ին, կազմակերպութեամբ Ամերիկայի Հայոց Առաջնորդարանին, Նիւ Եորքի Գավուքճեան սրահին մէջ հոծ բազմութիւն մը ներկայ էր այս յայտագրին: Հայրական ողջոյնի խօսք յղած էր Առաջնորդ Խաժակ Արք. Պարսամեան:

Յայտագրին վրայ կային Սասունի, Վան-Վասպուրականի, Ապարանի, Շիրակի, Շատախի, Մոկաց աշխարհի, Մուշի, Բալուի ժողովրդական երգերէն բացի Կոմիտաս, եւ Աշուղ Աշոտի, Թաթուլ Ալթունեանի, Արմէն Մովսիսեանի Յարութիւնեանի ստեղծագործութիւններէն ու երաժշտական պատշաճեցումներէն բաժիններ:

Նոր Տարուան Սեմին Հարիւրամեակին Ընդառաջ

ԴՈԿՏ. ԶԱՒԷՆ Ա. ՔՀՆՅ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

2015 Նոր Տարուան երջանկաբեր սեմին հայաշխարհը մտագրաւ կը դիմաւորէ Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակը եւս, քաղաքական անհորիզոն եւ անապահով փոթորիկներուն պատճառած ամպերուն ներքեւ: Կոտորածն ու գաղթը, Արեւմըտեան Հայաստանի հայութեան բնաջնջումի Օսմանեան Թուրքիոյ վատ ծրագրով, ջլատեցին հայուն տունն ու տեղը, եկեղեցին ու մշակոյթը՝ սկսելով մեր սրբազան հաստատութիւններէն եւ բարձրորակ մտաւորականներէն:

Հարիւր տարիներ եթէ բազմահազար ջահեր մարեցան, լուսատու վանքերն ու մշակոյթի վառարանները մոխիրի վերածուեցան, մեր վերապրած անմիջական ծնողներու եւ մեծ ծնողներու մորթին վրայ սպիացած բազմահազար վէրքեր բուժուեցան, «կեանք ընդ մահու փոխարկեցին», Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետի տեսիլքով: Մահը կեանքի վերածեցինք ու հայաշխարհը գերազանցապէս յաղթական դուրս եկաւ:

Երբ շուտով կը բաղխենք դռները Նոր Տարւոյն, մեր Փրկչին Սուրբ Ծննդեան խաղաղութեան աւետիսով, հարիւրամեակին ընդառաջ բիւրիցս կ'օրհնենք յիշատակը մեր նահատակներուն, որոնք սրբացուցած պիտի ըլլանք իրենց տարելիցին՝ յառաջիկայ Ապրիլի 23-ին: Եթէ բնաջնջումի համար ծրագրուած ազգ մը այսօր պետութեամբ, եկեղեցիով եւ հարազատ մշակոյթով, իր բազմերես քաղաքական, կրօնական, մշակութային եւ ընկերային հարուստ երթով կը քալէ ու կը շարժէ աշխարհն ամբողջ, թէ իսկ փոքրիկ եւ սակայն հնաւանդ ու քաղաքակիրթ, արթուն եւ քաջարի, հարիւրերորդ դասն է, որ կուտայ վատ եւ դրկից թշնամիին՝ անկախ պետականութեամբ եւ Ծիծեռնակաբերդով, գիտնականներով եւ քաղաքական գործիչներով:

Նոր Տարին բախտորոշ պիտի ըլլար եթէ ներքին եւ արտաքին անկայուն պատահարներ չմատնէին ճակատագիրը հայուն: Արդարեւ մատնուեցանք յումպետս եւ ուրիշին հաշուոյն:

Գաղթեցին ու վերապրեցան մեր անմիջական նախնիք, յատկապէս Սուրիա եւ Լիբանան, կերտելով ամէն ինչ, որոնց շնորհընկալները եղանք մենք՝ մեր սերունդը: Սակայն այսօր, վերապրած հայութիւնը անօրինակ եւ բռնադատեալ քաղաքական ամենադաժան խառնակչութեան զոհ դառնալ սկսաւ ճիշդ հոն ուր հարիւր տարի առաջ ապաստան գտած էին: Մերձաւոր Արեւելքի այսօրուան դժխեմ կացութիւնը եղաւ հայաշխարհի օրական մտահոգութիւնն ու մղձաւանջը:

Ցեղասպանութեան առաջին զոհերը եղան Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնն ու Սիսի Հայոց Կաթողիկոսութիւնը՝ գլխաւորութեամբ Զաւէն Պատրիարք Տ. Եղիայեանի, եւ Սահակ Բ. Խապայեան Կիլիկիոյ Կաթողիկոսին: Արմաշու Դպրեվանքն ու շնորհալի հոգեւորականներէն հոյլ մը՝ իրենց պաշտօնին վրայ նահատակուեցան երիտասարդ տարիքին: Դէմքեր՝ Սմբատ եպիսկոպոս Կարնոյ, Խոսրով եպիսկոպոս Կեսարիոյ, Ներսէս եպիսկոպոս Ատանայի, Խորէն եպիսկոպոս Կիւրինի, Մկրտիչ վարդապետ Տիարպեքիրի, Սահակ վարդապետ Երզնկայի, Արտաւազդ վարդապետ Եդեսիոյ, Պարգեւ Ծ. Վարդապետ Պրուսայի, Պսակ վարդապետ Խարբերդի, Շաւարշ վարդապետ Եւդոկիոյ, Սուրէն Ծ. Վարդապետ Բաղեշի, Գեղամ վարդապետ Քղիի, Համազասպ վարդապետ Ճանիկի, եւ Անատոլուի բազմաթիւ այլ յայտնի անուանի ծանօթ հայ հոգեւորականներ, ինչպէս նաեւ Հայ Կաթողիկէ եւ Աւետարանական համայնքներէն:

Ի պատիւ վերապրող հոգեւորականներուն, Օրմանեան, Դուրեան, Կիւլէսէրեան, Յովակիմեան, Փերտահճեան, Գուշակեան, Նարոյեան, Գասպարեան, Սարաճեան, Կարոյեան, Աջապահեան, Մելքոնեան, Սիրունեան եպիսկոպոսներուն եւ այլոց, կը խոնարհինք իրենց յիշատակին առջեւ, որոնք Հայ Եկեղեցւոյ վերընձիւղումը իրագործեցին ամենէն ճգնաժամային տարիներուն՝ Երուսաղէմի Պատրիարքութեան վերականգնումին եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նորահաստատ կայքին մէջ:

Արմաշի ուսուցչապետը Օրմանեան Պատրիարք ապրեցաւ տեսնելու առաջին պատերազմի զինադադարը եւ ողջունելու Հայաստանի Հանրապետութիւնը երբ վախճանեցաւ իր ծննդավայր Կ. Պոլսոյ մէջ 1918 թուին: Դուրեան Պատրիարք Երուսաղէմի եւ Խապայեան Կաթողիկոս Կիլիկիոյ, գլուխն անցան նահատակ Հայ Եկեղեցւոյ եւ հասան բեկեալ այդ նաւը ալեկոծ փոթորիկներէն փրկելու, որբախնամի պարտքն ալ ուսերուն, եւ յաջողեցան որպէս ճշմարիտ հերոսներ: Երուսաղէմը Վտարանդի Սահակ Հայրապետին օգնութեան հասաւ Եղիշէ Դուրեան պատրիարքի շնորհիւ, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տրամադրելով Լիբանանի եւ Սուրիոյ իր եկեղեցական եւ երուսաղիմապատկան վիճակները՝ օրհնութեամբը Տ.Տ. Գէորգ Ե. վշտալի Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Բաբգէն Ա. Աթոռակից Կաթողիկոսը Սահակ Հայրապետի կողքին ամրացուց թեմերը, բացաւ Անթիլիասի Դպրեվանքը 1930 թուին, հրաւիրեց Շահէ Գասպարեան ընտիր Արմաշականը եւ զինք եպիսկոպոս ձեռնադրելով վերատեսուչ նշանակեց դպրեվանքին: Երուսաղէմ եւ Անթիլիաս հարազատ հաստատութիւնները եղան փոխան նահատակ Արմաշի, որուն գլխաւորները եղան ռահվիրաները զոյգ հաստատութեանց՝ տակաւին քսանամեակ մը չանցած ցեղասպանութեան արհաւիրքէն:

Նուազ վերապրողներ եղան հայ տաղանդաւոր մտաւորականներէն որոնց լաւագոյն եւ մեծագոյն մասը ցեղասպանութեան զոհ գացին, կացինահարելով արեւմտահայ գրականութեան ամենէն պտղատու կաղնին, որուն արգասիքը եղան ի

Շար. էջ 11

Տնօրինէք Օթթաուայի Հայաստանի դեսպանատան մէջ

Յունուար 7, ձիւնամրրիկ այդ օդին խումբ մը ինքնաշարժներով մոնթրէալցիներ կ'ուղղուէին դէպի Օթթաուա:

Խումբին կ'առաջնորդէր Գանատահայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանը, որ Հայաստանի դեսպան պրն. Արմէն Եկանեանի հետ պայմանաւորուած էր դեսպանատունը օրհնէր եւ Ս. Ծնունդը անձնապէս շնորհաւորէր դեսպանին, դեսպանի ընտանիքին եւ դեսպանատան անձնակազմին:

Օթթաուայի համայնքային ներկայացուցիչներ, միութենական ու կրօնական գործիչներ հոն էին նաեւ Մոնթրէալէն եկող ներկայացուցիչներ:

Սրբազան Հայրը խօսք առաւ ու շնորհաւորեց ներկաները Նոր Տարւայ եւ ապա Մեծ Աւետիսի Տօներուն առթիւ: Ընկերակցութեամբ Տէր Կոմիտաս քհնյ. Միրզախանեանի կատարուեցաւ աղի ու հացի օրհնութիւնը, որմէ ետք դեսպանը իր կարգին շնորհաւորեց ներկաները

եւ բարեմաղթութիւններ յայտնեց ներկաներուն:

Գանատայի մէջ գտնուող այս պատառիկ մը հողը Ծննդեան հոգեպարար արարողութիւնով մը կ'սկսէր Նոր Տարին:

Պաշտօնական մասէն յետոյ բաժակները բարձրացան ու բարեմաղթութիւններ կրկնուեցան: Տեղի ունեցաւ ճոխ հիւրասիրութիւն մը:

Մտերմիկ խօսակցութիւնները, զրոյցներու փոխանակումներէ եւ նոյնպէս Հայ Բեմի Փետրուար 14-ի ներկայացման մանրամասնութիւնները աւարտելէ յետոյ Մոնթրէալցիները տաքուկ սիրտերով բռնեցին վերադարձի ճամբան:

Ուրախ յոյզեր եւ գողտրիկ պահեր էին որոնք պիտի մնան մեր յիշողութեան մէջ:

Արթօ Մանուկեան

ABAKA
SECTION FRANÇAISE
LUNDI 19 JANVIER 2015

LETTRE DE CONDOLÉANCES ADRESSÉE À L'AMBASSADEUR DE FRANCE À OTTAWA, PHILIPPE ZELLER PAR LE PRIMAT DE L'ÉGLISE APOSTOLIQUE ARMÉNIENNE DU CANADA, L'ÉVÊQUE ABGAR HOVAGIMIAN



ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԳԱՆԱՏԱՅԻ
ARMENIAN HOLY APOSTOLIC CHURCH CANADIAN DIOCESE
DIOCÈSE CANADIEN DE LA STE ÉGLISE APOST. ARMÉNIENNE
615 STUART, OUTREMONT, QUÉBEC, CANADA H2V 3H2
Tél.: (514) 276-9479 • Fax: (514) 276-9960 • E-mail: adiocese@aol.com • www.armenianchurch.ca

Son Excellence M. Philippe Zeller

Ambassadeur de France au Canada

Ottawa,

Monsieur l'Ambassadeur,

C'est avec une émotion profonde que nous suivons depuis hier les nouvelles choquantes de l'attentat meurtrier perpétré chez Charlie Hebdo à Paris.

Au nom du Diocèse de l'église apostolique arménienne du Canada, au nom de toutes nos organisations communautaires et des membres de notre communauté ainsi que personnellement, nous rejoignons la nation française dans son deuil national, suite à ce crime brutal qui cible la liberté d'expression dont la France est un défenseur inconditionnel reconnu et hautement respecté.

Nous exprimons notre solidarité entière avec la condamnation universelle de ce crime et nous nous associons à la peine de la nation française et de toutes les familles qui ont souffert la perte de leurs proches biens aimés dans cette violence insensée.

Que le Seigneur reçoive l'âme des défunts innocents et leur accorde le repos dans Sa paix éternelle.

Veuillez, Monsieur l'Ambassadeur, dans cette période triste et difficile, accepter nos prières et l'expression de nos condoléances les plus sincères.

L'Évêque Abgar Hovagimian
Primat du Diocèse de l'église apostolique arménienne du Canada

Le 8 janvier 2015

La reconnaissance du génocide arménien par la Turquie

La Turquie profitera-t-elle des commémorations organisées à l'occasion du centenaire du génocide arménien de 1915 pour s'excuser auprès des descendants des victimes et mettre fin au négationnisme ? Reconnaîtra-t-elle que l'anéantissement de la population arménienne avait été planifié par le gouvernement des Jeunes-Turcs de l'Empire ottoman ? Bref, la Turquie reconnaîtra-t-elle le génocide des Arméniens un siècle après les faits ? La réponse à toutes ces questions, c'est non.

Pourquoi ? D'abord, parce que l'État turc moderne est le successeur du gouvernement des Jeunes-Turcs qui a organisé les massacres de 1915. Des responsables du génocide figurent parmi les fondateurs de la République de Turquie. L'admettre, c'est ébranler un mythe fondateur de la nation.

Cela n'arrivera pas non plus parce que la Turquie sait qu'un aveu de responsabilité pourrait lui coûter cher, ouvrant la porte à des demandes de réparations économiques ou territoriales.

RIMA ELKOURI
La Presse
1er janvier 2015

Au tour de la Turquie

Editorial écrit en anglais par Edmond Y. Azadian et publié dans The Armenian Mirror-Spectator en date du 27 décembre 2014

Tout au long de son histoire, l'Arménie a servi de pomme de discorde entre camps ou puissances opposés, sauf peut-être durant le règne de Tigrane le Grand, au premier siècle avant JC. En l'an 387, l'Arménie a été divisée entre la Perse et l'Empire byzantin. Alors que les superpuissances de l'époque divisaient son territoire, elles étendaient leurs mains sur ce territoire, construisant des amitiés et souhaitant la souffrance de leurs ennemis.

Ce n'était pas la première fois que l'Arménie était aux prises avec la rivalité de superpuissances. C'est arrivé plusieurs fois dans l'histoire récente également. L'an 1878 est typique, alors que l'armée russe battait l'Empire ottoman, et que par le traité de San Stefano (article 16), les Arméniens se voyaient promettre un certain soulagement face à la persécution du Sultan. Des gouverneurs européens devaient être envoyés dans les provinces arméniennes afin d'assurer la réalisation des réformes promises par la Sublime Porte, dans le cadre de cet article du traité.

Mais ce traité alarmait une autre superpuissance de l'époque, la Grande-Bretagne, dont le Premier ministre, Benjamin Disraeli, a repris la conférence, cette fois à Berlin, afin de réviser les termes du Traité de San Stefano. Son urgence : les forces russes avaient, grâce au traité, accès aux eaux chaudes, qui à l'époque, constituaient une ligne rouge pour l'Empire britannique. Ainsi, le traité a été révisé et le destin des provinces arméniennes a été déplacé vers l'article 61, diluant complètement les termes du premier traité, laissant une fois de plus le destin des Arméniens à la compassion du sultan. En retour, le sultan céda l'île de Chypre à la Grande-Bretagne, afin d'être utilisée comme base militaire dans la Méditerranée orientale. Ainsi, Chypre a été le prix du sang des Arméniens échangé entre le Sultan et Disraeli.

Après la Première Guerre mondiale, la Turquie défaite a repris le dessus et le Traité de Sèvres (1920) a été remplacé par le traité de Lausanne (1923), le nombre des survivants de la communauté arménienne de Turquie s'est réduit comme peau de chagrin. Compte tenu de ces précédents historiques, les Arméniens ont bien raison de s'alarmer lorsque les puissances régionales s'assoient pour négocier des pouvoirs dont les intérêts incombent aux Arméniens.

L'arrivée du président russe Vladimir Poutine à Ankara, annoncée avec des offres à envier faites à la Turquie, est une cause de préoccupation pour les Arméniens, pour dire le moins.

Dans un court laps de temps, le vice-président américain Joe Biden s'est rendu en Turquie afin d'inciter le président Erdogan à se comporter comme un bon membre de l'OTAN. Rappelons-nous que le gouvernement turc refuse toujours l'utilisation de la base aérienne d'Incirlik par les forces américaines contre les terroristes de l'EI qui ravagent la Syrie voisine. Ensuite, le Premier ministre du Royaume-Uni, David Cameron, s'est rendu à Ankara avec la même mission. A son tour, le Pape François était en mission de paix, « rêver de voir la frontière arméno-turque ouverte, » et caractériser les « condoléances » d'Erdogan comme une « main tendue » aux Arméniens.

Lorsque de puissantes personnalités religieuses et politiques se rassemblent à Ankara, cherchant chacune un accord avec la Turquie, un leader arrogant comme Erdogan a toutes les raisons du monde de devenir encore plus impertinent. Tout en négociant avec le président Poutine, il affirmait haut et fort que le président Assad de Syrie devait abdiquer, ayant pleinement conscience que sa déclaration pouvait gêner les dirigeants russes.

D'autre part, tout en traitant avec dédain les exigences américaines, quelques jours après la visite de M. Biden à Istanbul, M. Erdogan a émis une critique acerbe de l'administration Obama, disant qu'il était « contre l'impertinence, l'insouciance et les demandes sans fin faites à 12 000 km de distance, » (New York Times, 2 décembre).

Ainsi Erdogan s'est dissocié des deux camps, en toute impunité à ce jour. Son arrogance et son audace à accepter les offres de la Russie ont alarmé certains milieux en Occident, se demandant si la Turquie est toujours à la hauteur de ses obligations en tant que membre de l'OTAN. Certains ont également demander l'expulsion de la Turquie comme membre de l'OTAN.

« Durant combien de temps encore l'Occident pourra-t-il prétendre qu'Erdogan est un allié, » a écrit Clifford D. May, dans le Washington Times du 4 décembre, concluant son article avec les lignes suivantes : « Vu sous cet angle, M. Erdogan ressemble à un néo-Ottoman, celui qui rêve de commander les musulmans - et ceux qui ont soumis à eux - dans de nombreux pays. Si cela est exact, le fossé entre la Turquie et l'Occident ne peut que s'élargir. »

Les conséquences des actions d'Erdogan ne semble pas beaucoup l'inquiéter. Le rapprochement entre la Russie et la Turquie nous donne toutes les raisons de nous inquiéter, parce que, comme dans d'autres précédents historiques, notre cause peut être vendu à vau-l'eau. Déjà, un signal inquiétant a été publié récemment par un analyste russe. En effet, « Il serait naïf d'attendre de la Russie des mesures sérieuses dans une situation désespérée avec le règlement des relations arméno-turques, » a déclaré le directeur adjoint de l'Institut russe des études stratégiques, Grigory Tishchenko.

L'expert ne voit aucune intention de Moscou à agir comme médiateur dans le règlement des différents arméno-turcs, tenant compte des récents

Suite à la page 8

Une livre-album photo sur l'Arménie et le Haut Karabagh va paraître en Californie

Le journal californien « Glendale news-press » a publié une interview du scientifique Vahé Piroumian, un Arménien né aux Etats-Unis, et membre actif de la communauté arménienne de Californie. Vahé Peroomian vient d'écrire un livre-album recensant des centaines de photographies prises en Arménie et au Haut Karabagh.

Le livre « A Photographic Journey of my Homeland Armenia » (voyage photographique dans la patrie l'Arménie) qui va paraître le 17 juillet aux éditions April pourrait être un succès. L'auteur y a publié ses photos prises en Arménie et au Haut Karabagh lors de ses multiples séjours entre 2004 et 2011.

Vahé Peroomian a saisi de nombreux clichés de la nature ainsi que des monuments culturels de l'Arménie.

Le livre contient également des interviews que l'auteur a réalisées avec les habitants.

KRIKOR AMIRZAYAN



Au tour de la...

Suite de la page 7

accords conclus entre Moscou et Ankara.

En effet, M. Poutine était à Ankara pour s'occuper d'autres questions. L'Arménie peut avoir été le dernier point à l'ordre du jour.

Des changements tectoniques se déroulent dans le réalignement des puissances mondiales. M. Poutine réagit, ou plutôt emboite, ces changements. Les sanctions misent en place par les Etats-Unis et l'Occident, et la baisse délibérée des prix du pétrole ayant pour but de ruiner l'économie de la Russie ont déclenché une forte réaction à Moscou. Plutôt que d'être intimidé, le Kremlin a agi avec audace et a trouvé des partenaires pour promouvoir ses nouvelles politiques. Un de ces partenaires, étonnamment, semble être la Turquie.

Un commentateur en Arménie, Nayira Hayroumian, a déclaré sur lragir.am : « Il ne fait aucun doute que la baisse soudaine des prix du pétrole et la dévaluation du rouble russe importent. Cependant, la raison principale déclarée par Sergey Lavrov - l'objectif des sanctions occidentales - est de changer le régime en Russie.

Apparemment, Poutine a senti la menace et a donc annoncé le retrait d'importants projets, les diplomates russes utilisent l'expression « la ligne irréversible n'a pas été franchie » sans rien spécifier de plus. Apparemment, le changement de régime est cette ligne. »

En ce qui concerne le Kremlin, Poutine a remanié toutes les cartes politiques en Europe grâce au nouveau plan énergétique russo-turc.
Après avoir révélé cet accord, nous devons savoir si Karabagh, les relations arméno-turques et le destin de la Syrie ont été également vendus aux enchères.

Les sanctions imposées par l'Occident pour isoler la Russie ont eu un impact sur l'économie, mais n'ont pas réussi, jusqu'à présent, à isoler Moscou. Après avoir conclu un accord énergétique de 400 milliards de dollars avec la Chine, le président Poutine s'est rendu en Inde afin d'y signer un autre accord énergétique de 40 milliards de dollars. Outre les accords énergétiques, la Russie a signé des accords pour la construction de centrales nucléaires et la vente d'armes en Inde. Tout au long de la guerre froide, l'Inde dépendait à 75% de la Russie pour ses armements.

Mais le changement dramatique est survenu à l'arrivée de M. Poutine à Ankara, alors qu'il a annoncé : « Ayant à l'esprit le fait que nous n'avons pas encore reçu la permission de la Bulgarie, nous pensons que dans de telles conditions, la Russie ne peut poursuivre ce projet. Si l'Europe ne veut pas le réaliser, alors cela signifie qu'il ne sera pas réalisé. Nous allons réorienter le flux des ressources énergétiques vers d'autres régions du monde. »

Cela scellait le sort du flux du Sud, qui aurait dirigé le gaz russe vers l'Europe via la Bulgarie. Mais sous la pression de l'Union européenne, le gouvernement bulgare a bloqué le projet russe. Le Kremlin a décidé, à son tour, de se tourner vers une nouvelle voie et de construire ses gazoducs à travers la Turquie vers un port de Grèce et de là, rediriger son gaz vers le reste de l'Europe affamée d'énergie. La Russie avait déjà signé un accord de construction d'une centrale nucléaire en Turquie. Les deux dirigeants ont réitéré une fois de plus que le commerce bilatéral augmenterait de 100 milliards de dollars annuellement d'ici l'an 2020, à partir de son niveau actuel de 35 milliards de dollars.

Historiquement la Russie, l'Iran et la Turquie ont été des ennemis et ont, tour à tour, gouverné le Caucase. Même aujourd'hui, ils poursuivent des objectifs politiques contradictoires, mais l'économie et les changements de puissance mondiale ont poussé ces pays dans les bras les uns des autres; La Turquie est frustrée par l'Union européenne, la Russie a été endommagée par les sanctions occidentales et l'Iran est sous la pression (et les sanctions) afin de renoncer à ses ambitions nucléaires. Au cours des dernières années, la Turquie et l'Iran ont augmenté leurs échanges mutuels de 400%. En émergeant du régime des sanctions, l'Iran a le potentiel de devenir une puissance économique.

Les présidents Poutine et Erdogan ont certainement discuté de certaines questions politiques qu'ignore le public. Ces éléments à l'ordre du jour doivent contenir les questions les plus controversées que les deux parties ont à résoudre. L'un de ces problèmes est la guerre en Syrie, sur laquelle Moscou et Ankara sont à couteaux tirés. On croit que M. Poutine ne cédera pas sur cette question. Les autres éléments sont les sanctions instituées par l'Occident contre la Russie. Comme allié de l'Occident, Ankara devait souscrire au régime des sanctions, mais ne l'a pas fait, ce qui lui a valu la reconnaissance de M. Poutine.

Alors que l'économie attire les parties, les problèmes et leurs solutions changent leur nature.

Par exemple, le conflit du Karabagh, le blocus turc de l'Arménie, et le génocide arménien vont certainement être considérées dans la perspective du rapprochement actuel plutôt que de leur importance historique ou juridique intrinsèque. La question du génocide ne peut avoir aucun intérêt dans le contexte actuel des relations russo-turques; par conséquent, nous ne pouvons avoir de commentaires sur la question. Mais, d'autre part, si le blocus handicape le libre-échange et le transport entre les deux pays (et par extension avec des partenaires Eurasiens de la Russie), Moscou et Ankara peuvent trouver une solution au blocus et la réactivation du système ferroviaire de l'Abkhazie.

Avec l'entente actuelle, la Turquie - qui est privée de sources d'énergie – va soudain devenir une plaque tournante de l'énergie, le contrôle des pipelines s'étendant à l'Europe, et sera donc plus propice pour atteindre certains accommodements avec les intérêts russes.

Le conflit du Karabagh sera également vu et revu dans le même contexte. Si aucune amélioration n'est enregistrée, cela ne peut pas être par un désir de plaire à l'Arménie, mais plutôt en raison des forces interactives durant ces négociations.

Une source russe semble avoir un regard interne sur ces négociations. Les solutions prévues peuvent sembler à double tranchant. Ainsi, un analyste russe, Yuri Glushkov, écrit dans Vestnik Kavkaza, une source bien informée sur la région du Caucase : « La coopération économique entre la Russie, la Turquie et l'Azerbaïdjan peuvent aider à résoudre les crises dans le Caucase du Sud, surtout entre l'Arménie et l'Azerbaïdjan dans le conflit du Haut-Karabagh. Le président turc Recep Tayyip Erdogan a notamment téléphoné à son homologue azerbaïdjanais, Ilham Aliev avant la visite de Vladimir Poutine. Il a invité Aliev au sommet du G-20 à Antalya l'an prochain et l'a informé des accords russo-turcs prévus.

« Le problème du Karabagh a sans doute été soulevé lors des négociations entre Erdogan et Poutine. Les deux présidents ont des intérêts directs sur la question. L'adhésion arménienne à l'Union eurasienne nécessite une résolution rapide de ces différends frontaliers. Les frontières arméno-azerbaïdjanaises restent fermées. Tous les investissements russes dans le pays seraient bloqués ou du moins inefficaces. La logistique alors voudrait un passage par la Géorgie coupable d'être éloignée de l'Union eurasienne. »

« La Turquie a besoin de paix dans le Caucase pour répondre à ses propres intérêts comme partenaire de la Russie et l'allié de l'Azerbaïdjan. De toute évidence, seule la Russie peut exercer une pression sur l'Arménie pour se retirer des provinces occupées autour du Haut-Karabagh. Cela permettrait d'ouvrir les frontières, de rétablir les communications et de constituer une base pour la coopération régionale multilatérale dont des millions d'habitants de la région pourraient bénéficier. Moscou et Ankara ont toutes les opportunités nécessaires pour être garants d'un nouvel accord de paix entre Bakou et Erévan, sans la nécessité d'impliquer tous les joueurs non-régionaux, dont les intérêts sont souvent controversé et dangereux pour les intérêts des Etats du Caucase du Sud. »

Durant la période soviétique, Nikita Khrouchtchev avait été assez téméraire pour envoyer un message à Ankara dans lequel Moscou disait n'avoir aucune prétention territoriale sur la Turquie, faisant abstraction du fait que l'Arménie faisait partie de l'Union soviétique et qu'elle avait - et a toujours – des réclamations territoriales en Turquie.

Poussé par les priorités mondiales de la Russie, nous ne pouvons attendre d'action différente de la part M. Poutine. La morale de l'histoire n'est pas de retenir son souffle pour savoir si le président Erdogan répondra à l'invitation du président Serge Sargissian afin d'assister à la commémoration du centenaire de génocide à Tzitzernakaberd.

Enhardi par son récent succès, M. Erdogan mènera lui-même la danse. Encore une fois, c'est au tour de la Turquie de déterminer le sort de l'Arménie.

Traduction N.P.

ABAKA
ENGLISH SECTION
MONDAY JANUARY 19, 2015

Entering the Centennial Year on the Wrong Foot

BY EDMOND Y. AZADIAN

As if the scourge of our failures in the Diaspora was not enough on this very auspicious moment of history, now dissonances and discord have also surfaced in Armenia, when cooperation and harmony are most needed to face the challenge of the century.

The centennial activities thus far are confined to ceremonial affairs, symbolic gatherings and heart-wrenching memorials, which all serve as necessary catharsis for the pain built up during the last century. But if those activities are not combined with political activism, we will be condemned to live in an illusory world.

The most significant political statement would have been the completion and the inauguration of the Armenian Genocide Museum, an earshot from the White House, in the nation's capital. That would have served as a symbol of our collective will to survive and to pursue justice. It would also have served as a reminder to the world about a century of injustice, as well as an educational forum for all to learn about the Armenian Genocide.

The failure to deliver the museum on schedule to provide substance to our memorials is one catastrophe, while yet another is the indifference regarding this failure. Where is the outrage?

Failing to build the museum by 2015 is tantamount to delivering a victory to the Turks on a silver platter.

The indignity goes to all the parties who contributed to this monumental failure, but above all, it goes to the entire community for its lackadaisical indifference for accountability.

This much is the Diaspora's share of responsibility.

Turning to Armenia, we have more disheartening news. The scholars who were supposed to lay the foundations of our centennial activities, especially by developing a solid body of scholarly Genocide literature, are at each others' throats at this moment.

While there was overall concern that scholars in Armenia and the Diaspora were working at cross-purposes, labeling each other with unsavory epithets, now the disease has reached Armenia to pit prominent local scholars against each other, as well.

Some scholars in Armenia used to accuse their diasporan colleagues as agents of Turkey or the US State Department. The counter charge was that scholars in Armenia were mired in nationalistic narratives, which cannot win currency on the international market. Now, these latter accusations have also been thrown at prominent scholars living and publishing in Armenia.

During a recent press conference, Hayk Demoyan, the director of the Genocide Memorial and Museum, and the official coordinator of the centennial programs in Armenia, accused some scholars in Armenia of being agents of Turkey's special services. He said, "During the organization of centennial commemorative events, there is a tendency to speak about righteous Turks who have saved Armenian lives, forgetting the fate of 1.5 million victims of genocide. Those who promote those tendencies are cooperating with the special services of the Turkish government. Nine out of 10 functions that they organize favor Turkey." He added: "We are not talking only about the Diaspora. Those are high-level officials in the Republic of Armenia, who are undermining my activities as the secretary of the official centennial committee."

Then he named another prominent scholar, Ashot Melkonian, saying the latter has tried to destroy his dissertation.

This is not the place to pass judgment on the academic merits or demerits of Hayk Demoyan or Ashot Melkonian, as the scenario is very ugly at a period when all efforts should be coordinated and directed towards organizing a successful centennial commemoration, especially when many foreign dignitaries will be converging on Yerevan on April 24. This kind of exchange of cheap shots does not augur well for a positive outcome.

Demoyan was a rising star in the academic circles when he was tapped by the government as the director of the museum. Before even beginning to deliver on his new job, he was accused of plagiarism and was severely criticized for presenting his doctoral dissertation in Russian rather than Armenian. Enter another scholar, Turkologist Ruben Melkonian, who has said that "both Ashot Melkonian and Hayk Demoyan are talented scholars, but their differences of opinion should not have moved to the public forum; they should have been confined to within the four walls of our academic institution."

However, he went further to elaborate that there is some truth in the fact

Cont'd on page 10

First American-Armenian Rose Float

The American Armenian community will have a float in the 2015 Roses Parade. The theme of the Parade is "Inspiring Stories" stories that provoke reflection and emotion on the people, places and experiences that mold, represent and showcase society.

The float called "Cradle of Civilization", celebrates the story of Armenian Immigrants who have, and continue to contribute to the Western society. The spectacular elements of the float symbolize Armenian ingenuity, craft, culture and tradition.

Design elements are the work of the famous artist Seroon Yeretzian, and several prominent Armenians will be on the float, representing Armenians' contribution to society.

The impressive float measures 55 feet long, 28 feet high and 18 feet wide. , The center of the float features the ancient Tree of Life, surrounded by peacocks, and gorgeous grapes, pomegranates, apricots (Armenia's national fruits).

Armenia Officially Joins Eurasian Economic Union

YEREVAN — Armenia officially joined the Eurasian Economic Union (EEU) on January 2, along with Russia, Kazakhstan and Belarus in a Moscow-led project.

As part of a deal signed last October, Armenia will have limited representation in the economic union until the end of 2015. Three Armenian members will share one vote in the union's governing body, the Eurasian Economic Commission, TASS news agency reports.

Kyrgyzstan is also set to join the Union on May 1.

Armenia's entry into the EEU means it will gradually integrate into a unified system of currency, with 2022 set as the deadline for the full transition, TASS reports.

Robert Harutyunyan, Karine Minasyan and Ara Nranyan have become members of the EEC Board (ministerial rank) on behalf of Armenia. Armen Tumanyan and Erna Ayriyan have been appointed members of the EEU Court by another decision of the Supreme Eurasian Economic Council.

Armenia's Vice Prime Minister and Minister of International Economic Integration and Reform Vache Gabrielyan has been nominated to the post of Member of the Council of the Eurasian Economic Commission.

Uruguay's Foreign Ministry Calls for Recognition of Nagorno-Karabakh Republic

MONTEVIDEO – The Uruguayan Foreign Ministry asked for the international recognition of the Republic of Nagorno-Karabakh and the right of its people to self-determination on Jan. 4, after a meeting with Armenian representatives.

The Minister of Foreign Affairs of Uruguay Luis Almagro stressed the "need for a peaceful settlement of Nagorno Karabakh taking particular account of the right to self-determination of the Armenian people and the principle of territorial integrity of the Republic of Armenia under its borders as an independent country between May 1918 and December 1920. A parliamentary

Cont'd on page 10

Armenia rail freight prices to rise?

The current prices of the rail freight in Armenia require maximum savings on the part of the South Caucasus Railway (SCR) company, and they give the minimum profits, SCR General Director Victor Rebets told Armenian News-NEWS.am.

But, as per Rebets, this could not have been any other way, since the price of electricity increased by 42 percent in 2013, and by another 11 percent this year.

"We have used all the possible reserves to reduce the workload of the freight senders and recipients, [and have] developed a resource- and energy-savings program. This has enabled us to reduce the pressures on the [freight] prices.

"Last year, however, our profitability totaled 3 percent. And which business will adapt to it? We are an investment company created to invest in the development of the railway infrastructure of Armenia," the SCR chief said, in particular.

He added that even though the current freight rates in Armenia are still lower than in Georgia, this difference was even more marked prior to the currency exchange rate fluctuations in November and December.

The South Caucasus Railway company is the concessionaire of Armenia's railways.

Islamized Armenians are baptized and learning the language – diaspora minister

The Ministry of Diaspora of Armenia continues to carry out activities with the Islamized and clandestine Armenians.

Diaspora Minister Hranush Hakopyan told the aforesaid to reporters, but she added that, for understandable reasons, this work is not widely presented.

"But we are pleased with the results. The Government of Armenia helps them visit the historical homeland.

"Moreover, an exception is made for the [respective] people over the age of 20 to be permitted to participate in the [ministry's] Come Home [motherland visiting] program, which is intended for [Diaspora-Armenian] teenagers.

"Two of them were not only baptized, but they stayed in Armenia to learn Armenian. Later, they will return to Tigranakert [i.e., today's Diyarbakir, Turkey] to open an Armenian school there. Hundreds of people in that region want to learn Armenian," the minister stated, in particular.

Uruguay's Foreign Monistry...

Cont'd from page 9

delegation led by President of the Chamber of representatives Jorge Orrico and legislators of all parliamentary parties visited Artsakh in November 2012, where they met with officials of the executive and legislative branches, as well as with civil society of Nagorno Karabakh. More recently, the issue was addressed in a joint declaration signed by Presidents Jose Mujica and Serzh Sarkisian in July 2014, on the occasion of the official visit of the president of the Republic of Armenia to Uruguay.

The Foreign MinisterAlmagro took the opportunity to offer his Christmas greetings for the 6 January to the Armenian people of the Republic of Armenia and the Republic of Nagorno Karabakh, hoping that it will soon find its recognition in the international arena of nations"

AGBU NICOSIA CELEBRATES ITS HUNDREDTH ANNIVERSARY

Recently AGBU Nicosia celebrated its hundredth anniversary with an evening of speeches, tributes and performances. The event took place at the AGBU Club in Nicosia and was attended by prominent members of the Cypriot Armenian community, including Archbishop Nareg Alemezian, Vartkes Mahdessian, representative of the Armenian community in the Cyprus House of Representatives, and Benon Sevan, the former head of the United Nation's Oil-for-Food Program, and other dignitaries.

The celebration was organized by the AGBU Club's cultural committee and headed by Maggie Haladjian Eskidjian, who began the evening with a welcome speech and introduced the Sourp Asdvadzadzin Church Children's Choir. The concert was followed by performances by saxophonist Garen Zartarian and violinist Lucy Hovhanessian.

Hampig Mardirossian, editor of Khosnag Magazine in Beirut, delivered a speech outlining the history of AGBU both in Cyprus and internationally, highlighting AGBU's humanitarian aid campaign, assistance to Syrian and Iraqi Armenians and fostering development in education and healthcare in Armenia and Nagorno-Karabakh.

The celebration concluded with a ceremony to honor members who have served the AGBU Nicosia community for more than fifty years and a reception for the dozens of guests who came to celebrate the community's milestone.

Maggie Haladjian Eskidjian, chairwoman of the AGBU Nicosia Club's cultural committee, welcomes guests

Hampig Mardirossian, editor of Khosnag Magazine in Beirut, delivers a speech outlining the history of AGBU both in Cyprus and internationally

Today's Cypriot Armenian community numbers between 3,000 and 3,500 people and is centered in Nicosia, with smaller groups scattered across the island in Larnaca, Limassol and Paphos. Though the existence of the community dates to the Byzantine period, the majority of today's Cypriot Armenians are descendants of Armenian genocide survivors who fled from Cilicia. In the twentieth century, Cyprus was home to the AGBU Melkonian Institute, the only Armenian boarding school in the diaspora. Before it closed in 2005, the school attracted young Armenians worldwide and produced generations of men and women who went on to lead their communities throughout the diaspora.

The Centennial...

Cont'd from page 9

that the "grants offered by foreign sources in the organization of centennial activities mostly serve the interests of the Turkish side; let's engage in dialogue, let's forget the past, let's talk about mutual pain, etc."

Indeed, in certain quarters honoring righteous Turks has gained prominence. There has to come a time to pay due respect to Turkish individuals — who contrary to the Turkish masses and certainly risking their own lives — demonstrated humanity in saving Armenian lives. But those people were exceptions and not the rule. At this point, going after righteous Turks means to divert and dilute the issue. It is putting the cart before the horse.

The Jews have been honoring righteous gentiles but after what? After recovering their homeland and after benefitting from unprecedented compensation. Certainly they can rightfully honor the righteous individuals from a position of strength.

Ruben Melkonian further dwelt on the origins and the purposes of foreign grants by adding: "If we dig deep in the origins of those foreign grants, we may discover that they have been hatched in Turkey. I caution all Armenian organizations to refrain from receiving foreign grants, at least during this centennial year."

One would have wished to begin the year with a salvo of positive news, but we are far from being in that kind of salutary disposition.

Speaking of righteous Turks, it is very appropriate to quote and then emulate Turkish columnist Cengiz Aktar, who has written a piece in Today's Zaman newspaper under the title "Entering 1915." He concludes his piece with the following: "The Armenian Genocide is the Great Catastrophe of Anatolia, and the mother of all taboos in this land. Its curse will continue to haunt us as along as well fail to talk about, to recognize, understand and reckon with it. Its centennial anniversary actually offers us a historic opportunity to disperse with our habits, understand the Other and start with the collective therapy."

We wish someone would prescribe the same collective therapy for all Armenians in order to put their house in order, demonstrate unity and determination so that we do not enter the centennial year on the wrong foot.

«ՕՐՕՐ»-Ը, ՈՐ ՉՄԱՀԱՑԱՒ...

ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ

Հալէպի հոգետունը ինծի համար սոսկ անուն էր, բայց երբեք այդպէս չէր ծնողքիս եւ հօրեղբօրս՝ տոքթ. Ռոպէր Ճէպէճեանին եւ մանաւանդ՝ մեծ ծնողներուս համար:

Բոլորն ալ հալէպահայեր, որոնք ամուր կերպով կառչած էին իրենց արմատներուն, ինչպէս նաեւ մեծցած ու դրոշմուած էին իրենց ծնընդավայրին նկարագիրով: Անոնք շատ չէին խօսեր հոգետան մասին, սակայն անոնց ներաշխարհին մէջ կային խոր եւ բազում զգացումներ՝ այդ կառոյցին կապուած: Անոնք տեսած էին ու ապրած կեանքի դառն փորձառութիւնները, հոգետան մէջ ու անոր ընդմէջէն: Կրնայի զգալ ցաւը, վիշտն ու արցունքը: Հոգետունը զբօսավայր չէր, այլ Ցեղասպանութենէն ճողոպրած հայուն համար հանդիսացած էր «վերջին կայան», ուր բիւրաւոր հայ գաղթականներ սոված, հիւծուած ու հիւանդ վիճակի մէջ էին. անոնք կ�triՐապրէին եւ կը պատրաստուէին իրենց հոգին աւանդել անոր ցուրտ փողոցներուն մէջ...:

Հօրեղբօրս Հալէպի տան գեղանկարչական գործերու հաւաքածոներուն մէջ կար նաեւ հոգետան մէկ նկարը: Տարիներ շարունակ Հալէպ կատարած յաճախակի այցելութիւններուս ընթացքին ինծի համար հոգետունը այդ նկար էր ու քիչ մըն ալ աւելին...: Կրնայի տեսնել ու թափանցել հայուն «սեւ» ներաշխարհը այդ նոյն հոգետան փողոցներուն մէջ: Եւ այդ «սեւին» ականատես եղած էին մեծ ծնողքս եւ հօրեղբայրս, որոնք տեսած էին, թէ ինչպէ՛ս հոգետան փողոցներէն հայերու դիակները սայլի մէջ կը լեցնէին ու «կը թաղէին» հասարակաց փոսի մէջ:

Եւ հօրեղբայրս հոգետան նկարը դրած էր մէկ կողմէ հայուն «վիշտին» արտայայտութեան համար, բայց անպայմանօրէն մտածելով անոր «վերապրումին» տեսլականին մասին:

Եւ այս վերապրումը ունի իւրայատուկ պատմութիւնը մը:

Կարապետ աղա Պապլուզեան՝ Զէյթունի զաւակ, 1918-ին կ՛ապրէր Հալէպի մէջ: Անոր բնակարանը կը գտնուէր Համիտիէի շրջանին մէջ, եւ դրացի էր Յովհաննէս աղա Գատեմեանին: Կարապետ աղա ամէն երեկոյ տուն վերադարձին կ՛անցնէր հոգետան ետեւի կողմէն՝ խրամին աջ կողմը երկարող նեղ փողոցով: Ան ամէն երեկոյ կը տեսնէր հայորդիներ, որոնք հիւանդ, դժբախտ եւ յաճախ մահամերձ վիճակի մէջ համարեա նուաղած կ՛ըլլային մայթերուն վրայ...:

Սակայն այդ գիշերը Կարապետ աղային համար տարբեր եղաւ. արդարեւ, երբ ան դարձեալ կ՛անցնէր նոյն փողոցներէն, գետին պառկած տժգոյն եւ տկար մարդ մը խօսքը իրեն ուղղելով՝ դողդոջուն ձայնով եւ հեւալով ըսաւ. «Դուն հա՞յ ես...»:

Կարապետ Պապլուզեան կանգ առաւ: Երեւի պահ մը մտածեց, թէ «Բարի սամարացի»-ի պատմութիւնը իրական դարձաւ նաեւ իրեն համար, նաեւ մտածեց, թէ «Բարի սամարացի»-ի պատմութեան մէջի ո՞ր կերպարը պէտք էր ըլլար ինք այդ պահուն: Ղեւտացի՞ն, քահանա՞ն, թէ՞ սամարացին: Կարապետին ընտրանքը եղաւ սամարացիին կերպարի մարմնաւորումը: Ան մօտեցաւ տկար մարդուն եւ օգնեց անոր, որ ոտքի ելլէ: Բայց այդպիսով չբաւարարուեցաւ: Կարապետ զայն տարաւ իր տունը, տաք ճաշ հրամցուց եւ բաղնիքը ջերմացնելով մարդուն լոգանքի առիթ տուաւ: Անոր ցնցոտիները հանեց եւ նոր զգեստներ հագցուց: Այս բոլորը կատարուեցան լռութեան մէջ, առանց տակաւին ծանօթութեան կամ խօսակցութեան: Տկար ու յոգնած մարդը միայն կը հետեւէր Կարապետին ցուցմունքներուն: Եթէ ան այլընտրանք չունէր, ապա ինչպէ՞ս կրնար այդ բոլոր հոգատարութիւններուն «ոչ» ըսել...:

Երեւի պէտք էր հանգստանար, որպէսզի այս «սպառած օտարական»-ը քաջալերուէր ու սկսէր խօսիլ Կարապետին հետ: Իսկ խօսակցութի՞ւնը... Ո՛չ իր մասին էր, եւ ո՛չ ալ իր կրած տառապանքին ու դժբախտութիւններուն: «Օտարական»-ը հայ էր, ինչպէս բոլորը, եւ ինքն ալ նոյն ճակատագիրին ենթարկուած էր: Կարիքը չզգաց խօսելու համայն հայութեան կրած տառապանքին մասին, ան նախընտրեց «վերապրելու» մասին խօսիլ:

«Կրնայի՞ք ինծի ջութակ մը ճարել», եղաւ իր առաջին հարցումը՝ Կարապետ աղային ուղղուած:

Կարապետ շուարած էր, հաւանաբար սկսաւ կասկածիլ, թէ այս հիւանդ ու հիւծած «օտարականը»

նաեւ հոգեկան ու մտային խախտումներ սկսած էր ունենալ: Բայց Կարապետ ի մտի պէտք էր ունենար բանաստեղծին ճշմարիտ խօսքը. «Եւ մահամերձն ալ կ՛ուզէ երկու բան, նախ կեանքը՝ վերջը լացող մ՚իր վրան...»:

Կարապետ աղա փութաց իր դրացիին՝ Յովհաննէս Գատեմեանին մօտ, բերաւ անոր ջութակը ու յանձնեց «օտարական»-ին: «Օտարական»-ին ձեռքին մէջ ջութակը շատ վարժ գործիք մը թուաց: Ան շատ արագ կերպով կրցաւ լարերը շտկել եւ սկսաւ նուագել հայկական մեղեդիներ, որոնք իրարու յաջորդեցին:

Կարապետ եւ Յովհաննէս՝ երկուքն ալ զարմացած, հարց տուին «օտարական»-ին:

- Ի՞նչ է անունդ, բարեկա՛մ:

- Բարսեղ,- եղաւ անոր պատասխանը:

- Մականո՞ւնդ:

- Կանաչեան,- շարունակեց ան: - Ես Կոմիտաս վարդապետին հինգ աշակերտներէն մէկն եմ...:

Կարապետ եւ Յովհաննէս «օտարական»-ը տարին Ազգային առաջնորդարան: Եւ այդ օրերուն, երբ հայ ժողովուրդը կ՛ապրէր իր ամէնէն դաժան, դժուար ու ողբերգական օրերը, առաջնորդարանը կրցաւ կազմակերպել յատուկ համերգ մը Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մանկապարտէզի սրահին մէջ: Համերգները կրկնուեցան...: Ներկաները, որոնք յուզուած էին, արցունքները իրենց աչքերուն, մէկ կողմէ կ՛ապրէին հայուն կարօտը, իսկ միւս կողմէ՝ վերապրելու զգացումը...: Եւ այդ վերապրումի կենդանի օրինակը՝ Բարսեղ Կանաչեանի «չմահացած» տաղանդն էր:

Համերգներուն հասոյթը յատկացուեցաւ տաղանդաւոր երաժիշտին, որ Համաշխարհային Ա. պատերազմէն ետք մեկնեցաւ Փարիզ՝ իր երաժշտական ուսումը կատարելագործելու նպատակով:

Բարսեղ Կանաչեանի տաղանդն ու երաժշտական կեանքին մէջ արձանագրած նուաճումները դարձան ակներեւ: Հայկական ու միջազգային երաժշտական արուեստին մէջ տիրական անուն մը դառնալու կողքին, անոր «Օրօր»-ը դիւթեց եւ տակաւին յուզող արուեստի գործ մըն է, որ ցայսօր կ՛ունկնդրուի մեծ անձկութեամբ:

«Քուն եղիր բալաս...աչերդ խուփ արա...»:

«Օրօր»-ը, որ մահուան ճիրաններէն դուրս գալով՝ եղաւ ապրող իրականութիւն:

Բարսեղ Կանաչեան «Օրօր»-ին ընդմէջէն կրցաւ տեսնել հայ մանուկին քնանալը, անոր քնանալուն ընդմէջէն՝ «առողջ» մեծնալու հոլովոյթը, իսկ հայ մանուկին հասակ նետելուն ընդմէջէն Կանաչեան տեսաւ հայուն յաղթանակը՝ մահուան դէմ: «Հոգետուն»-ը՝ «...մահուան շուքի ձոր»-ը, դարձաւ ապրելու մարտահրաւէր:

1955-ին՝ այդ դէպքէն երեսունեօթը տարիներ ետք, Բարսեղ Կանաչեան Հալէպի մէջ դարձեալ կը հանդիպի իր «Բարի սամարացի»-ին՝ Կարապետ աղա Պապլուզեանին. անոնք կ՛ողջագուրուին: Պահը յուզիչ է, սակայն կը հաստատէ, որ հայը չմեռաւ, իսկ հոգետունը դարձաւ հայուն վերապրելու կռուանը եւ յատկապէս հայը հայուն հետ ու իրարմով վերապրելու առիթ ստեղծող կեդրոնը:

Հալէպի հօրեղբօրս տան «հոգետան» պատկերը...: Պատկեր մը, որուն ընդմէջէն հայը յաղթեց «մահուան», ուր «Օրօր»-ը չմահացաւ...:

«Օրօր»-ը, որ չմահացաւ...: Իսկ հայը շարունակեց ստեղծագործել ու ապրիլ:

Նոր Տարուան Սեմին...

Շար. էջ 6-էն

միջի բազմաց Վարուժան եւ Սրմաքէշխանլեան, Զարդարեան եւ Զոհրապ, Սեւակ եւ Սիամանթօ, Քէլէկեան եւ Տաղաւարեան, Մեծն Կոմիտաս եւ Սմբատ Բիւրատ, Թլկատինցին ու Բարսեղեան: Ցեղասպանութեան զոհ գացին ո՛չ միայն հին վանքերն ու դպրանոցները իրենց աշակերտութեամբ, այլ նաեւ հազարաւոր ձեռագիր մատեանները, վկայ անոնց հրատարակեալ ցուցակները, որոնց մնացորդացը ի պահ կը մնան այսօր ի վկայութիւն հայ գրչագրութեան եւ նկարչութեան անգերազանցելի արուեստին:

Նոր Տարին Հայ ժողովուրդին համար Ծնունդ է նաեւ Փրկչին՝ Խաղաղութեան Իշխանին, որուն այնքան կարիքը ունի համայն աշխարհը այսօր: Սուրբ Ծնունդը մեր ժողովուրդին վերածնունդն է եղած ամէն տարի ճիշդ Ամանորին: Երկուքին բերկրանքը լիապէս կը հրճուեցնէ մեր երեխաներն ու պատանիները, ինչպէս մենք հրճուեցանք հեռաւոր անցեալին: Տարիներու թաւալումը շատ բան խլեց մեր իրաւունքէն, եւ սակայն առաւելագոյնս շնորհեց մեզի բարձրորակ առաքինութիւններ՝ հիմնուած բարերար պատեհութիւններու վրայ, ուր բարձր կանգնեցանք, պատիւ բերինք մեր անցեալին, եւ ներկայի դիմադրականութեամբ մեր ապագան երաշխաւորեցինք: Որբանոցները Մելքոնեան եւ այլ Հաստատութիւններու վերածեցինք, գաղթաշխարհը կերտեցինք եւ Սփիւռքը որպէս հարազատ նեցուկ հաստատեցինք Հայրենիքի կողքին՝ թէ՛ դժուար եւ թէ՛ փորձերով լի տասնամեակներու ընդմէջէն:

Հարիւրամեակը կ՛անցնի, եւ մեր նահատակ սերունդի թողած աւանդը չի խամրիր երբեք, պայմանաւ որ պատուաւոր պահապաններն ու գործադիրները ըլլանք մեր հոգեւոր եւ ազգային արժէքներուն՝ ներքնապէս համերաշխ եւ արտաքնապէս պատուաբեր: Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ բոլորիս:

Հ.Բ.Ը.Միութեան Ալեք Մանուկեան վարժարանի աշակերտներու ինքնագիր բանաստեղծութիւնները եւ մաղթանքները Նոր Տարուայ եւ Ս. Ծնունդի առիթով

Նոր Տարի եւ Ս. Ծնունդ

Նոր Տարի եւ Ս. Ծնունդ, քեզ կը սպասենք անհամբեր:
Մենք գիտենք՝ ամէն տարի
Դուք կը բերէք նուէրներ,
Գոյնզգոյն վառուող լոյսեր,
Խաղալիքներ, բարիքներ:

Նոր Տարի եւ Ս. Ծնունդ,
Մանուկներուն բեր ուրախաբեր օրեր,
Պայծառ գոյներ, փայլող աստղեր,
Վառուող մոմեր ու հրաշքներ,
Մենք հաւատքով ու ժպիտով
Կը սպասենք անհամբեր:

Էլիսիա Ֆարա
5-րդ կարգ

Նոր տարի եկաւ,
Ուրախութիւն բերաւ,
Յիսուս Քրիստոս ծնաւ՝
Մեծ Աւետիս եղաւ:

Հրեշտակներն բարի
Գեղեցիկ երգերով լի՝
Եկան մեզ ողջունելու,
Սուրբ Ծնունդը տօնելու:

Զարուհի Սարգսեան
5-րդ կարգ

տօներուն:
Կռուարարներուն՝ սէր թող տայ,
Վախկոտներուն՝ անվախութիւն,
Եւ ամբողջ աշխարհի մարդկութեան նուիրէ՝
Խիղճ եւ ընկերասիրութիւն:
Նուէրներ ալ թո՛ղ բաժնէ,
Բոլոր մարդոց աշխարհի՝
Ձմեռ պապը մեր բարի:
Հաւատանք հրաշքներու.
Հիւանդները՝ բժշկուին,
Կոյրերուն աչքերը բացուին,
Աղքատները՝ աղքատ չըլլան,
Եւ բոլորը երջանկանան:
- Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ,
Աշխարհի բոլոր էակներուն.
Ձմեռ պապը թող երթայ, պատրաստուի,
Յաջորդ հրաշալի՝ Նոր Տարի եւ Ս. Ծնունդ:

Լեւոն Մարկոսեան
5-րդ կարգ

Նոր Տարի է, Նոր Տարի,
Բարի Կաղանդ բոլորին:
Սէր, հաւատք իրարու նուիրենք,
Որ լաւ ժամանակ անցնենք մենք:
Կաղանդ Պապան եկաւ,
Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ.

Ծնունդ է այսօր,

Ուրախութեան օր,
Երգենք ու պարենք,
Նուէրներ բաժնենք:

Այս յատուկ օրուան՝
Նուէրն է Յիսուս մանուկ,
Իր ծնունդին օրուան՝
Կը դիմաւորէ Կաղանդ պապուկ:

Գոյնզգոյն ծառերը,
Հայրեր, մայրեր, մանուկներ,
Ստանան տեսակաւոր նուէրներ,
Նոյնիսկ ջերմ փաթթուկներ:
Ծնունդի օրն է, բոլորիս մաղթանք
Պարենք հայկական շուրջպար,
Առիթովը մեր Սուրբ Ծննդեան:

Սեզար Էլ- Մուժապպէր
5-րդ կարգ

Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ

Ամբողջ աշխարհի մանուկներուն,
Որ անհամբեր կը սպասեն այս

- Շնորհաւոր Նոր Տարի
- Օրհնեալ է յայտնութիւնը Քրիստոսի
Բոլորը իրարու նուէրներ թող տան,
Եւ ծառերուն վրայ աստղեր շողան:

Յասմիկ Գրիգորեան
5-րդ կարգ

Նոր Տարի Եւ Սուրբ Ծնունդ

Ա՜խ, Նոր Տարի
Որքան ես բարի.
Մենք լեցուած ենք յոյսերով,
Որ մեր տուները պիտի լեցուին նուէրներով:
Փաթիլ, փաթիլ ճերմակ ձիւնով,
Շրջապատուած ենք Կաղանդի օրով:
Ուրախութիւն բոլորիս՝
- Ձեզի մեզի մեծ Աւետիս:
Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ

Գրեց: Ռաֆֆի Երզնկացեան
5-րդ կարգ

Սուրբ Ծնունդ

Այսօր տօն է խնդութիւն
Յիսուս մանուկն է ծնուել:
Ուրախացէք մարդկութիւն
Ձեր փրկիչն է յայտնուել:

Փառաբանենք Յիսուսը.
Ուրախացէք ամէնուր՝
Երգ, խնդութիւն ու բերկրանք,
Պայծառ լոյսեր անհամար:

Կատարենք սրբութեամբ
Պատգամները Յիսուսի,
Որ մարդկութիւնն աշխարհի
Բարութեան սերմեր ցանի:

- Յիսուս ծնաւ ու յայտնեցաւ
- Օրհնեալ է յայտնութիւնը Քրիստոսի:

Արթիւր Յովհաննիսեան
5-րդ կարգ

Ձոյգ տօներու առիթով
Կաղանդ պապան պիտի գայ,
Մեզի նուէր պիտի տայ:
Ան մեզ կը դիտէ,
Ու լաւ կը տեսնէ.
Ամէն չարութիւն կ՚արձանագրէ:
Լաւ է ըլլանք բարի, հնազանդ,
Որ վարձատրուինք ամէն կաղանդ:

Սարօ Մարկոսեան
5-րդ կարգ

Ահա եկաւ Նոր Տարին,
Եկէք տօնենք միասին,
Անհամբեր սպասենք Կաղանդ պապուկին,
Ուրախ տօնենք Ամանոր եւ Ս. Ծնունդը Յիսուսին:

Յիսուս ծնաւ մսուրին մէջ.
Հետեւելով պոչաւոր աստղին
Գտան մանուկը՝ 3 մոգերը միասին,
Գեղեցիկ նուէրներ տարին Յիսուսին:
Փառք ի բարձունս երգեցին
Հովիւները երջանիկ.
- Ձեզի մեզի մեծ Աւետիս:

Անահիտ Վարդանեան
6-րդ կարգ

Ամանոր

Տօնածառներ ու լոյսեր փայլուն,
Ընտանիքներ հաւաքուած խնդուն,
Կաղանդ Պապան պատրաստուած,
Կ՚աճապարէ, որ չըլլայ ուշացած:

Մանուկներն անհամբեր,
Կը սպասեն համախումբ՝
Ուրախ, զուարթ կը պատեն ծառի շուրջ,
Կ՚արտասանեն, կ՚երգեն ու կ՚աղօթեն շատ լուրջ:

Տօնն է այսօր Յիսուս Մանուկին,
Կանաչ ու կարմիր մոմեր կը վառին:
Փաթիլները կ՚իջնեն, այս գիշեր առատ՝
Լոյսերն են պայծառ, ծառերն են ճերմակ
Կը լսենք հաճելի երգեր ու զանգակ:

Մայա Պօղոսեան
6-րդ կարգ

Ամանոր

Բոլոր պզտիկները կը սպասեն անհամբեր,
Մինչեւ որ գայ Ձմեռ Պապիկը այս գիշեր.
Պիտի ան բաժնէ բազմաթիւ նուէրներ,
Եւ մեզի հետ տօնէ ուրախ վայրկեաններ:

Նոր տարուայ առիթով կը մաղթենք բոլորին
Առողջութիւն եւ երջանկութիւն սրտագին,
Խաղաղութիւնն ալ, երբ միացնենք մեր մաղթանքին,
Աշխարհը կը դառնայ վայր մը դրախտային:
Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ

Ալեքսիա Կէօնճեան-Խաչիկեան
6-րդ կարգ

Շար. էջ 13

Նոր Տարին եւ Ս. Ծնունդը Վանգուվըրի մէջ

Այս տարի եւս Վանգուվըրի հայութիւնը խանդավառութեամբ տօնեց Ամանորի եւ Ս. Ծննդեան տօները:

Կաղանդի գիշերը տուներէ պատրաստուած աւանդական ուտեստեղէններու եւ անուշէղէններու ճոխ սեղաններու շուրջ բոլորուած Ս. Վարդան Հայց. Առաքելական Եկեղեցւոյ համայնքի անդամները դիմաւորեցին Նոր Տարին: DJ Varto-ի զուարթ երգերն ու երաժշտութիւնը ուրախ մթնոլորտ մը ստեղծեցին ամբողջ երեկոյթի ընթացքին:

Նոր Տարուան առաջին վայրկեաններուն, եկեղեցւոյ անձնուէր հոգեւոր հովիւ Տ. Գեղարդ քհնյ. Կարապետեան ներկաները առաջնորդեց տաճար, ուր Տէր Հայրը կատարեց Նոր Տարուան առիթով արարողութիւն մը, որու ընթացքին ան հայցեց Աստուծոյ օրհնութիւնները Հայաստանի եւ Գանատայի ու անոնց բնակչութեան ապահովութեան եւ խաղաղութեան համար: Տէր Հայրը ապա կատարեց աւանդական օրհնութիւնը նուռին, որ կը խորհրդանշէ Երկիրը եւ Մարդկութիւնը, որոնք կը պաշտպանուին Աստուծոյ շնորհներով:

Յունուար 6-ին տեղի ունեցաւ Հայկական Ս. Ծնունդի Պատարագը եւ հաւատացեալները հաղորդուեցան Գանատահայոց Առաջնորդ Գեր. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանի Նոր Տարուան եւ Սուրբ Ծննդեան պատգամով, որ կարդացուեցաւ Տէր Հօր կողմէ:

Խաժակ Սրբազան հանդիսապետեց Ֆէրիգիւղի Ս. Վարդանանց Եկեղեցւոյ Ս. Պատարագին

Երէկ, 21 Դեկտեմբեր, 2014-ին Ֆէրիգիւղի Ս. Վարդանանց եկեղեցիէն ներս Կիրակնօրեայ Ս. Պատարագին հանդիսապետեց Ամերիկայի Արեւելեան թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Ս. Արք. Պարսամեան, որ հիւրաբար քաղաքս կը գտնուի այս օրերուն:

Եկեղեցին, որ ամէն Կիրակի կը լեցուի հաւատացեալներով, երէկ դարձեալ հաւատացեալներու հոծ բազմութիւն մը ունէր իր երդիքին տակ: Ս. Պատարագը մատոյց հոգեւոր հովիւ Արժ. Տ. Զօհրապ Քհնյ. Ճիվանեան, երգեցողութիւններն ալ գեղեցկօրէն մեկնաբանուեցան Ս. Վարդանանց եկեղեցւոյ անդամներուն կողմէ: Դասուն մէջ կը գտնուէր եկեղեցւոյ քարոզիչ եւ Կրօնական Ժողովի Ատենապետ Հոգշ. Տ. Թաթուլ Ծ. Վրդ. Անուշեան:

Խաժակ Սրբազան Տէրունական Աղօթքէն առաջ իմաստալից քարոզ մը խօսեցաւ եւ հոգեկան ներշնչումներու պահեր ապրեցուց հաւատացեալներուն: Ըսաւ որ հայ ժողովուրդը երկար դարերէ ի վեր հաւատարիմ մնացած է իր կրօնքին ու փարած՝ Հայաստանեայց Եկեղեցիին:

Պոլսահայ համայնքն ալ քրիստոնէական աւանդութիւններու նկատմամբ իր մեծ փարումով օրինակելի համայնք մըն է Սփիւռքահայ աշխարհէն ներս, շեշտեց Սրբազանը, միասնութեան եւ համախմբումի կոչ ալ ուղղելով Պոլսահայութեան:

Պատարագի աւարտին բազմաթիւ հաւատացեալներ Սրբազանի Աջը առին ու օրհնութիւն ստացան:

Առաջնորդ Սրբազանը աւելի վերջ եկեղեցւոյ խորհրդարանին մէջ մէկտեղուեցաւ Թաղային Խորհուրդի անդամներուն, ապա՝ «Ալաճաճեան» սրահին մէջ ալ Վարդանանց երգչախմբի անդամներուն եւ պատասխանատուներուն հետ:

«ՄԱՐՄԱՐԱ»

ԱՆԳԼԻԱ ՍԽԱԼ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ...

«Արմէնիուզ» առցանց թերթի աշխատակից Գրիգոր Ամիրզայեան կը գրէ, թէ 2014-ի վերջաւորութեան, Անգլիոյ մեղրամոմով արձաններու «Մատամ Թիւսօ» աշխարհահռչակ թանգարան իր այցելութեան ընթացքին, զարմանալի երեւոյթի մը դէմ յանդիման գտնուած է: Հոն տեսած է, որ Աթաթիւրքի արձանը զետեղուած է խաղաղութեան խորհրդանիշ անձնաւորութիւններու՝ Նելսոն Մանտելայի, Մարթէն Լիւթէր Քինկի եւ Տալայ Լամայի կողքին:

Այսպէս, սպիտակ աղաւնիներ ներկայացնող պաստառի մը առջեւ, իրենց կեանքը խաղաղութեան նուիրած այդ հսկաներուն քով դիրք գրաւած է նաեւ ձեռքերը միլիոնաւոր Հայերու եւ Յոյներու արեան թաթխած Մուսթաֆա Քէմալի արձանն ալ: Ապա, յօդուածագիրը հարց կու տայ, թէ կատարուածը արդեօք թանգարանի՞ն անփութութեան հետեւանք է, թէ՞ թրքական լոպիին գործը: Այնուհետեւ կ'եզրակացնէ. «տրամաբանականօրէն, Աթաթիւրքի տեղը պէտք է ըլլար Հիթլէրի կամ Ստալինի՝ Պատմութեան արիւնարբուներու կողքին»:

ՀԲԸՄիութեան Ալեք Մանուկեան...

Շար. էջ 12-էն

Նոր Տարուայ եւ Ս. Ծննդեան տօներու առիթով կը մաղթեմ ընտանիքիս, բարեկամներուս եւ ուսուցչուհիներուս առողջութիւն եւ երջանկութիւն:

Կը մաղթեմ նաեւ, որ ցեղասպանութեան 100-ամեակի առիթով, հայ ժողովուրդը տիրանայ արդար հատուցումին:

Ալեակ Մանուկեան
Երկրորդական Ա կարգ

Նոր Տարուայ եւ Ս. Ծննդեան տօներու առիթով երկու մաղթանքներ ունիմ: Կարեւոր կը նկատեմ, որ բոլորս պէտք է մաղթենք, որ Սուրիոյ եւ Իրաքի կռիւները կենան: Թուրքերէն կը պահանջենք ցեղասպանութեան ընդունում եւ հատուցում:

Արման Մակարեան
Երկրորդական Ա կարգ

Ես կը մաղթեմ, որ արդարութիւնը յաղթանակէ: Կ'ուզեմ, որ բոլոր քրիստոնեաները ուրախ ըլլան Ս. Ծննդեան եւ Նոր տարուան համար: Կը մաղթեմ, որ բոլոր երեխաները ուտելիք ունենան այս տօներուն համար: Կը յուսամ, որ աղքատ պզտիկներ կարողանան նուէրներ ստանալ:

Շնորհաւոր Նոր տարի եւ Ս. Ծնունդ

Քիշա Փոլադօկլու
Երկրորդական Ա կարգ

Նոր Տարուայ եւ Ս. Ծննդեան տօներու առիթով, շատ մաղթանքներ ունիմ: Ես շատ կը սիրեմ Նոր Տարին եւ Ս. Ծննդեան տօնը: Իմ մաղթանքն է, որ աշխարհը ապրի ուրախ՝ առանց պատերազմներու: Նաեւ՝ թուրքերը խոստովանին եւ ներողութիւն խնդրեն իրենց գործած ցեղասպանութեան համար:

Մելանի Ղազարեան
Երկրորդական Ա կարգ

Շնորհաւոր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ.

Կը մաղթեմ ընտանիքիս, բոլոր ընկերներուս եւ բոլոր ուսուցիչներուս ուրախութիւն, առողջութիւն, յաջողութիւն, իսկ աշխարհին խաղաղութիւն:

Կալին Պագգալեան
Երկրորդական Ա կարգ

Նոր Տարին իր հետ բերում է նոր յոյսեր, նոր երազանքներ.
Բարով եկար Նոր Տարի,
Մեր երազանքների տարի,
Թող աշխարհը խաղաղ լինի,
Որ հայրենիքս ծաղկի:

Գոռ Յովհաննիսեան
Երկրորդական Բ կարգ

Մաղթանքս պիտի ըլլայ գալ տարուայ 2015-ին որ Աստուծոյ եւ Յիսուս Քրիստոսի սրբութիւնը, ողորմութիւնը եւ փրկութիւնը բոլոր աշխարհի ժողովուրդներուն վրայ ըլլայ.

Բարեբեր եւ խաղաղ կեանք բոլորին:

Իսահակ Գարատանայեան
Երկրորդական Բ կարգ

Կը մաղթեմ, որ այս Ս. Ծնունդի առիթով ամէն մարդ փորձէ ուրիշ մը ուրախացնել, որ յաջորդ տարին լաւ անցնի: Նաեւ կը մաղթեմ բոլորին առողջութիւն եւ յառաջդիմութիւն:

Լարա Ճէնթիլէ
Երկրորդական Բ կարգ

Յոյսով եմ, որ պիտի գայ այն օրը, երբ բոլորս լինենք մեր ցանկացած տեղը: Ես կը ցանկանայի լինել իմ հայրենիքում, իմ հայրենի օճախում, եւ նորից ու նորից նոյն ձեւով տօնել մեր այս ուրախ աւանդական տօնը:

Էմիլ Բազինեան
Երկրորդական Բ կարգ

Այս տարուայ մաղթանքս է առողջութեամբ յառաջադիմել եւ յաջողիլ դասերուս մէջ:

Կը մաղթեմ նաեւ՝ լաւ տարի մը ընտանիքիս, ընկերներուս եւ աշխարհի բոլոր հայերուն:

Խաղաղութիւն ամբողջ աշխարհին:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Ս. Ծնունդ

Լուսին Գրիգոր
Երկրորդական Բ կարգ

Կը մաղթեմ, որ 2015-ին խաղաղութիւն տիրէ աշխարհին, հայ ժողովուրդը յաջողի իր պահանջատիրութեան մէջ. մեր ամբողջական հայրենիքը ունենանք, որպէսզի մեր ազգը իրականացնէ իր վերջնական փոխադրութիւնը դէպի հայրենիք:

Ատիս Մակարեան
Երկրորդական Բ կարգ

Կը մաղթեմ, որ այս տարի իրականանայ դասընկերներուս եւ իմ երազս. Հայաստան այցելենք, նոր հայ ընկերներ ունենանք եւ աւելի մօտէն ծանօթանանք հայութեան:

Ստեֆանի Մկրտիչեան
Երկրորդական Բ կարգ

ԱՀԱՒՈՐ ՀԱՒԱՔԱԿԱՆ ՈՃԻՐ ՄԸ...

Շար. էջ 1-էն

կողմէ, բայց կարողացած են ապաստանիլ տպարանի մը մէջ, պատանդ առնելով տպարանատէրը: Մինչ այդ՝ երկու այլ ահաբեկիչներ շուկայի մը մէջ չորս պատանդներ վերցնելով պահանջած են ազատ արձակել երկու եղբայրները: Ոստիկանութիւնը ի վերջոյ յարձակած է երկու կեդրոններու մէջ ապաստանած ոճրագործներուն վրայ եւ սպաննած է զանոնք: Մահացած են նաեւ չորս պատանդները: Ֆրանսայի նախագահ Հոլանտ «Շառլի Էպտո»ի կեդրոնը փութացած է եւ խստիւ դատապարտած է կատարուած ոճրային արարքը, զայն որակելով արտայայտուելու ազատութեան դէմ զգրելի ոճիր: Անմիջապէս աշխարհի բազմաթիւ երկիրներու նախագահներ, ներառեալ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան եւ Արտաքին Գործերու Նախարար Էդուարդ Նալպանդեան, արաբական եւ իսլամական պետութիւններու ղեկավարներ, Սէուտական Արաբիոյ թագաւորը, Արաբական Լիկայի Ընդհանուր Քարտուղարը, «Ազհար Շէրիֆ»ը, դատապարտած են

ահաբեկչութեամբ խօսքի ազատութեան վայրագ ոտնակոխութիւնը: Փարիզի եւ այլ քաղաքներու մէջ կազմակերպուեցան զանգուածային ցոյցեր՝ «Շառլի եմ» ցուցանակներ պարզելով: Մեծագոյն ցոյցը կը սպասուէր Կիրակի, Յունուար 12-ին:

«Շառլի Էպտո»ի մնացեալ խմբագիրներն ու աշխատակիցները, դէպքին յաջորդ օրը յայտարարեցին թէ երգիծաթերթը պիտի շարունակուի հրատարակուիլ Յուն. 14-ին մէկ միլիոն տպաքանակով փոխան սովորական 75 հազարի:

Ճակատագրի տարօրինակ դարձուածքով մը, դէպքի առաւօտուն, «Էպտո»ի երիտասարդ հայ սիւնակագիր եւ աշխատակից Մաթէօ Մատենեան իր պաշտօնակիցներէն մէկուն կը տեղեկացնէր թէ՝ այդ օր գործի պիտի չգար Հայկական Ծնունդի եւ Աստուածայայտնութեան տօներուն պատճառաւ եւ կը խոստանար շաբաթավերջին հայկական աւանդական անուշեղէններով ներկայանալ...:

ՀՀ ՍՓԻՒՌՔԻ նախարար...

Շար. էջ 4-էն

ծրագիրը, որն ընթացել է 6 ուղղութիւններով՝ Հայոց լեզուի արագացուած ուսուցում, Սփիւռքի ուսուցիչների վերապատրաստում, ազգային երգի ու պարի դասընթացքներ, սփիւռքահայ երիտասարդ առաջնորդների ամառային դպրոց, սփիւռքահայ լրագրողների ամառային դպրոց, Սփիւռքի համայնքային գործի կազմակերպիչների դասընթացներ: Ծրագրին մասնակցել են 222 սփիւռքահայ՝ աշխարհի 22 երկրից:

Յուլիս-Հոկտեմբեր ամիսներին իրականացուել է «Իմ Հայաստան» համահայկական փառատօնը որին մասնակցել է՝ նախատեսուած 1000-ի փոխարէն, շուրջ 1500 սփիւռքահայ՝ աշխարհի 16 երկրից: «Իմ Հայաստան» փառատօնն իր մէջ ներառել է. «Պարարուեստի օրեր» (Յուլիսի 1-10ը, 37 պարախումբ՝ աշխարհի 12 երկրից), «Խմբերգային արուեստի օրեր» (Օգոստոսի1-5ը, աշխարհի 9 երկրից ժամանած 15 եւ Հայաստանեան 4 երգչախումբ), «Ասմունքի երեկոյ» (Օգոստոսի 16-ին, 20 ասմունքող՝ աշխարհի 5 երկրից), «Դուդուկի փառատօն» (Սեպտեմբեր 20-24-ը, 14 դուդուկահարներ՝ աշխարհի 5 երկրից եւ Արցախից), «Հայ երգի օր» (Սեպտեմբեր 25-ին, 30 երգիչներ եւ երաժիշտներ Սփիւռքից եւ Հայաստանից) փառատօնները:

2014 թ. Սփիւռքի երիտասարդների հայրենաճանաչութեան «Արի տուն» ծրագիրն ընթացել է 8 փուլով, նախատեսուած 1000-ի փոխարէն մասնակցել է 1071 երիտասարդ՝ աշխարհի 31 երկրից, այդ թւում՝ առաջին անգամ Տիարպեքիրից ժամանած 48 իսլամացած հայերից բաղկացած խումբը, դրանից զատ՝ ծրագրի ճամբարային փուլին մասնակցել են նաեւ Արցախից 80, Սիսիանից՝ 20 եւ հայաստանեան հիւրընկալ ընտանիքներից՝ 200 երիտասարդներ:

Նախարար Հրանոյշ Յակոբեանը հանգամանալից անդրադարձաւ «Սփիւռքահայերի ինտեգրման գործընթացի կազմակերպում» ծրագրին, նշեց, որ լուծուել են Հայաստանում հաստատուած, սիրիահայերի, իրաքահայերի, Ուքրանիայից եւ այլ երկրներից եկած սփիւռքահայերի բազմաթիւ իրաւական, սոցիալական, առողջապահական, կրթական խնդիրներ, կազմակերպուել են մշակութային միջոցառումներ: Փոփոխութիւններ են կատարուել մի շարք իրաւական ակտերում, որոնք վերաբերել են ՀՀ մուտքի արտօնագրի ստացմանը, կացութեան կարգավիճակ ձեռքբերմանը, պետական տուրքերի վճարմանը եւ այլն: 2014թ. Յունուար-Հոկտեմբեր ամիսներին ՀՀ քաղաքացիութիւն է ստացել 3300 սիրիահայ:

Տարուայ ընթացքում իրականացուել է «Մեր Մեծերը» ծրագիրը: կազմակերպուել են բազմաթիւ միջոցառումներ նուիրուած 2014թ. Հանրահռչակուած «Մեր Մեծեր»-ին (Կոմիտաս, Յովհաննէս Թումանեան, Սիամանթօ, Արշիլ Գորկի, Գալուստ Կիւլպէնկեան,): Կազմակերպուել է 9 համաժողով:

Իրականացուել են երեք տարածաշրջանային՝ «Մերձաւոր Սփիւռքի կրթամշակութային աջակցութեան», «ԱՊՀ տարածաշրջանային հայկական համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն օժանդակութեան», «Աւստրալիայի հայ համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն աջակցութեան» ծրագրերը:

2014թ. սփիւռքի հիմնախնդիրների վերաբերեալ ՀՀ սփիւռքի նախարարութեան պատուէրով ՀՀ ԳԱԱ ինստիտուտները, ԵՊՀ-ն եւ այլ գիտական կենտրոններ իրականացրել են հետազօտութիւններ, հրատարակուել է 12 գիրք:

2500 տպաքանակով հրատարակուել է 2013թ. «Սփիւռք» տարեգիրքը, երկու նոր տարբերակով՝ արեւելահայերէն-ռուսերէն եւ արեւմտահայերէն-անգլերէն:

Իրականացուել են շուրջ 4 տասնեակ մշակութային միջոցառումներ:

Գործել են նախարարութեան 6 կայքերը, 2014թ. Մեկնարկել եւ հեռարձակուել է հայոց լեզուի հեռուստադպրոցի 34 հեռուստադաս, տարբեր հեռուստաալիքներով հեռարձակուել է նախարարութեան աւելի քան 150 հաղորդում եւ կազմակերպուել է 160-ից աւելի տաղաւարային հաղորդում, նախարարութեան պատուէրով նկարահանուել է 10 ֆիլմ, նոյնքան սոցիալական գովազդ: Սփիւռքի 20 երկրների հայ համայնքների հետ կազմակերպուել է աւելի քան 20 հեռակոնֆերանս:

2014թ. Սփիւռք է առաքուել 40.000 կտոր դասագիրք եւ ուսումնաօժանդակ նիւթեր: Տարուայ ընթացքում սփիւռքեան կառոյցների, հայաստանեան կազմակերպութիւնների ու անհատների տրամադրուել է 12.000 կտոր նախարարութեան պատուէրով հրատարակուած գրքեր, ձայնասկաւառակ, խտասալիկ, ՀՀ պետական խորհրդանշանների փաթեթներ եւ այլն:

Ասուլիսի աւարտին ՀՀ սփիւռքի նախարարը պատասխանեց լրագրողների հարցերին:

Էրտողան դարձեալ կը յոխորտայ

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայյիպ Էրտողան կը շարունակէ Հայոց Ցեղասպանութիւնը ուրանալու անտեղի յոխորտանքները: Էրտողան, այս անգամ յայտարարած է, թէ հայերը կը գերադասեն իրենց ներուժը վատնել «այսպէս կոչուած Հայոց Ցեղասպանութիւնը» քաղաքականացնելու վրայ:

Թուրքիան թոյլ պիտի չտայ խեղաթիւրել պատմական փաստերը, որոնց կարգին՝ 1915 թուականի իրադարձութիւնները:

Ըստ ատրպէյճանական «Vesti.az» կայքին՝ այդ մասին յայտարարած է Թուրքիոյ նախագահ Էրտողան՝ Թուրքիոյ դեսպաններու համաժողովին ընթացքին:

Էրտողան իր խօսքին մէջ նշած է, որ այս տարի աշխարհի որոշ շրջանակներ պիտի նշեն «այսպէս կոչուած Հայոց Ցեղասպանութեան» 100 ամեակը: Անոր ելոյթին այս հատուածը փոխանցած է ատրպէյճանական գործակալութիւնը՝ վկայակոչելով թրքական «Թէ.Ար.Թէ. Հապեր»ը:

ԱՓԱ գործակալութիւնը՝ վկայակոչելով «Սի.Էն.Էն. Թիւրք» պատկերասփիւռի կայանը, կը հաղորդէ, որ Էրտողան ճաշի հրաւիրած է աշխարհի տարբեր երկիրներու մէջ հաւատարմագրուած Թուրքիոյ դեսպանները, դիւանագիտական ներկայացուցիչներու չորսօրեայ համաժողովին մասնակիցները եւ ճաշկերոյթին ընթացքին խօսած է նաեւ հայկական հարցերու մասին:

Ըստ այս լրատուութեան՝ Էրտողան յայտնած է, թէ հայերը կը գերադասեն իրենց ներուժը վատնել «այսպէս կոչուած Հայոց Ցեղասպանութիւնը» քաղաքականացնելու վրայ:

«Այս առնչութեամբ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը արտերկրի մէջ լայնածաւալ գործունէութիւն կը տանի: 2015 թուականին նախարարութիւնը եւ համապատասխան այլ կառոյցներ պիտի աշխատին համակարգուած կերպով: Ես համոզուած եմ, որ անոնք պիտի կարենան անհիմն մեղադրանքները», ըսած է Թուրքիոյ նախագահը:

Թրքական «Թուտէյ Զաման»ի փոխանցմամբ՝ համաժողովին ընթացքին Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլութ Չաւուշօղլու Եւրոպան մեղադրած է Եւրամիութեան՝ Թուրքիոյ անդամակցութեան հարցին մէջ կանխակալ, միակողմանի վերաբերմունք ցուցաբերելու մէջ եւ նշած է, որ հակառակ ատոր, Անգարան կը շարունակէ Եւրամիութեան համարկուելու ջանքերը: Ան ըսած է, որ արտաքին գործոց նախարարութիւնը եւ կառավարութիւնը ընդհանրապէս ամէն ինչ կ՚ընեն թուրք հանրութիւնը ոգեւորելու՝ Եւրամիութեան անդամակցելու հեռանկարով, ջանքեր կը թափեն, որ Թուրքիոյ քաղաքացիները կարենան առանց վիզայի Շենկենի գօտիի երկիրներ երթալ:

«Հիւրրիյէթ Տէյլի Նիուզ»ի համաձայն՝ անդրադառնալով Սուրիոյ ճգնաժամին՝ ան անգամ մը եւս պնդած է Սուրիոյ մէջ անվտանգութեան եւ ոչ թռիչքային գօտիներ ստեղծելու Անգարայի դիրքորոշումը:

Առաջին Համաշխարհային պատերազմին ընթացքին Տարտանելի ճակատամարտի 100-ամեակին առիթով, որ աւարտած էր թուրքերուն յաղթանակով, Չաւուշօղլու ծրագրած էր համաժողովի ծիրին մէջ 9 Յունուարին միօրեայ այցելութիւն՝ Չանքալայի նահանգ:

«Անատոլու» լրատու գործակալութիւնը եւս որոշ թուաբանական տուեալներ կը հաղորդէ.

Շար. էջ 15

Desjardins
Caisse de Chomedey

Hrair Ketchedjian, B.A. Écon.
Directeur Général
Représentant en épargne collective
pour Desjardins
Cabinet de services financiers inc.

450 688-0900, poste 215
Télécopieur : 450 688-1704

Siège social
3075, boul. Cartier Ouest, Laval (Québec) H7V 1J4
desjardins.com/caissedechomedey

Exclusive tour of ancient and modern

EGYPT

FEBRUARY 25 - MARCH 8, 2015

Itinerary

Wednesday Feb. 25	Departure from Montreal (or other cities)
Thursday Feb. 26	Arrival at Cairo International airport. Bus transfer to hotel Le Meridien Heliopolis 5 star on B & B basis. Welcome dinner at Goganian Club.
Friday Feb. 27	Egyptian museum (treasures of Tut Ankh Amon and Hall of the mummies) Lunch at Andrea restaurant. Sound and light show at the pyramids.
Saturday Feb. 28	Citadelle area and Khan Khalil souk. Lunch at Fridays restaurant on the Nile. Attend the "Beast on the moon" play, followed by dinner at Houssaper Club.
Sunday March 1	Saqqara, the pyramids of Giza and the Sphinx. Lunch at Homenetmen Noubar Club. Dinner on the Nile Crystal (Nile cruise dinner with show).
Monday March 2 to March 5	Transfer from hotel to airport: Flight Cairo-Aswan. Transfer in Aswan to a 5 star Nile cruise boat, full board basis. The cruise will last for 3 days. You will visit: High Dam, Unfinished obelisk, Philea Temple, Temple of Edfu, Temple of Kom Ombo, Valley of the Kings, Temple of Karnak, Temple of Luxor, Temple of Queen Hatchipsut and Colossus of Memnon ...
Thursday March 5	Transfer from Luxor to Hurghada by bus. Two nights at the Marriott Hurghada hotel 5 star on half board basis.
Friday March 6	Enjoy the red sea (Bathing, Skin or Scuba diving, Fishing, Boating).
Saturday March 7	Transfer from Hurghada to Cairo by plane. One night at Le Meridien Airport 5 star on b.b. basis.
Sunday March 8	Flight back home and arrive on March 8th

*Land cost $1,380 USD + Air travel (approx $900 USD)**

The cost of $1,380 USD per person includes:
5 star accommodation (double occupancy, single room available for an additional $250 USD)
Flights from Cairo-Aswan and Hurghada-Cairo
Local transportation, driver, guide, shows, entrance fees & taxes
Mostly full board (except few meals)
Excludes visa fees (to be paid upon arrival)

For details and questions about registration:
Address to the Tekeyan Cultural association (514) 747-6680 centretekeyen@bellnet.ca
or Arto Manoukian (514) 824-5300 manoukb@yahoo.com

Additional information:
A valid passport is needed with more than 6 months expiry date at departure time.
A deposit of $500 USD is required upon registration.
The payments should be made no later than January 15, 2015.
(*) Group rates, depending on the number of participants. Non Montrealers to book their own flights and will be greeted at Cairo's International Airport upon arrival.

A UNIQUE OPPORTUNITY TO VISIT PHARAOH'S LAND

ԹԷՔԷԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՎԱԼԷՆԹԱՅՆԻ ԽՐԱԽՃԱՆՔ

DINER DANSANT ROMANTIQUE

Շաբաթ, 14 Փետրուար 2015, երեկոյան ժամը 8էն սկսեալ

Երեկոյթը պիտի խանդավարէ սիրուած երգիչ

Donation: $40
Samedi, le 14 Février, 2015
à partir de 20h00

Pour réservations:
Tékeyan 514 747 6680
Berdj 514 585 9064

Centre Tékeyan, 825 Rue Manoogian, St-Laurent, QC. H4N 1Z5

Էրտողան դարձեալ կը...

Շար. էջ 14-էն

Մեւլուութ Չաւուշօղլու ըսած է, որ դիւանագիտական ներուժի տեսանկիւնէ Թուրքիան դարձած է աշխարհի 6րդ երկիրը: Թուրքիան աշխարհով մէկ 228 դեսպանատուներ եւ դիւանագիտական ներկայացուցչութիւններ ունի:

Իսկ Պոլսոյ մէջ գործող բազմաթիւ երկիրներու գլխաւոր հիւպատոսութիւններու թիւով Թուրքիան դարձած է աշխարհի երկրորդ քաղաքը՝ Նիւ Եորքէն ետք:

Komitas
SALON FUNÉRAIRE
ԹԱՂՄԱՆԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

Funéraille Traditionnel
Monument
Pré-arrangement

5180, rue Salaberry
Montréal, Québec H4J 1J3
Tél. : 514 331-0400

www.komitas.ca

Թուրքիոյ մէջ պահպանուած ամենահին հայկական եկեղեցիներէն մէկուն մէջ Մարտ ամսուն պատարագ պիտի մատուցուի

Թուրքիոյ տարածքին մէջ գործող ամենահին հայկական եկեղեցին կը գտնուի Քայսերիի մէջ (Կեսարիա): Ան կառուցուած է 1191 թ.: 820-ամեայ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին դեռ կը շարունակէ ծառայել հաւատացեալներուն:

2015 թ. Մարտ 13-ին այս եկեղեցւոյ մէջ պատարագ պիտի մատուցուի: Կ'ակնկալուի թէ պատարագին մասնակցելու համար հայեր պիտի ժամանեն Թուրքիոյ տարբեր տեղերէն: Կ'ենթադրուի թէ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին Կեսարիոյ ամենահին կառոյցներէն մէկն է:

«Նոր Օր»

1915-2015
Կը Յիշենք Հայկական Յեղասպանութիւնը
եւ Արդարութիւն Կը Պահանջենք

ՀԱՆԳԱՆԱԿԱՅԻՆ ՔՈՔԹԷՅԼ

Ձեր նիւթական եւ բարոյական օժանդակութեամբ պիտի ոգեկոչենք մեր անշիրիմ մնացած նահատակները եւ արդարութիւն պահանջենք:

30 Յունուար, 2015 Երեկոյեան ժամը 8:00-ին, Հայ Կեդրոնի Սրահին մէջ (45 Hallcrown Place)

Միացէք մեզի այս Հանգանակային Ճեռնարկին եւ տեղեակ եղէք Հայկական Յեղասպանութեան 100-Ամեակի ծրագիրներուն:

Ծանօթ
Մուտքը ազատ է սակայն անհրաժեշտ է որ ապահովէք ձեր տոմսերը է-նամակով եւ կամ հեռաձայնով.

1915-2015
We Remember the Armenian Genocide and Demand Justice

FUNDRAISING COCKTAIL

Your contributions will support the commemoration of our martyrs and our ongoing struggle for justice

Friday, January 30, 2015 at 8:00pm at the Armenian Community Centre Hall (45 Hallcrown Place)

Join us to learn about the Armenian Genocide Centennial Events taking place across Canada in 2015

Note:
Admission is free but we ask that you reserve your tickets through one of the contacts listed below:

Holy Trinity Armenian Apostolic Church Սրբ. Երրորդութիւն Հայց. Առ. Եկեղեցի	416-431-3001	info@torontoarmenianchurch.com
St. Mary Armenian Apostolic Church Սրբ. Աստուածածին Հայոց Առ. Եկեղեցի	416-493-8122	stmaryarmchurch@yahoo.com
St. Gregory Armenian Catholic Church Սրբ. Գրիգոր Հայ Կաթողիկէ Եկեղեցի	416-444-9924	st.gregory@rogers.com
Armenian Evangelical Church of Toronto Հայ Աւետարանական Եկեղեցի	905-305-8144	aectoronto@yahoo.com
Maral Mkhjian Boujikian (5pm - 9pm) Մարալ Մխիթեան Պուճիքեան	416-414-9718	benjaminmaral@yahoo.ca

www.genocidecentennial.ca

What Areas Of Study Are Included In The Curriculum?

Armenian Language, Heritage and Traditions

Theater-Drama

Armenian Dance

Music

Chess

Photography

AGBU Montreal
Հ.Բ.Ը.Մ. Մոնթրեալ

ՀԱՅՈՐԴԵԱՑ ՕՐ
HAYORTYATS OR

HAYORTYATS OR

What is Hayortyats Or?

- The **AGBU HAYORTYATS OR**, in partnership with parents and community members and organizations prepares the next generation of Canadian Armenians in preserving the Armenian language, history, culture and traditions, while focusing on character, knowledge and mutual respect.
- We offer the children of our community an embracing environment to discover their heritage, be proud of their ancestors and lay a strong foundation for the future of our community.

Who May Enroll?

- Anyone ages 10-16 years.

Cost?

- $225 for the opening session (January 31 - May 9, 2015)
  Two sessions per year (September - December, January - May)

When and Where Do Classes Take Place?

- Every Saturday from 9:30 am -2:00 pm at
  AGBU Alex Manoogian School
  755 rue Manoogian, Saint-Laurent, Québec H4N 1Z5

Who May I Contact to Enroll My Child?

- *For more information, please contact:*
  Silva Mangassarian 514 778-9479
  Emma Sargsyan 438 994-2634
  hayortyats@gmail.com
  www.hayortyats.ca

FREE for the newly arrived Syrian Armenian Students